

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهيرة
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

30րդ ՏԱՐԻ, 2011, ԹԻԻ 11 (353) - VOL. XXX N° 11 - السنة الثلاثون - العدد الحادية العشر

ԴՈՒԻՆ ՄՈՒՆԶՕՂԼԵԱՆ
Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԵՍՊԱՆԸ
ԼՈՆՏՈՆԻ 2012-Ի
ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ





ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԼՈՆՏՈՆԻ 2012Ի ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՌԻՆՔ ՍՏԱՅԱԾ ՔՈՅՐ ԴՈՒԻՆ ՄՈՒՆՋՕՂՎԵԱՆԸ

PhotoRAFFI

Չորեքշաբթի, 23 Նոյեմբեր 2011ի երեկոյեան, «Սուքքարիա» ճաշարանին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը պատուեց քոյր Դուին Մունջօղլեանը, որ Ասիոյ փինկ-փոնկի ախոյեանութեան տիրանալով՝ ապահովեց Լոնտոնի 2012ի ողիմպիականին մասնակցութեան իրաւունքը:



PhotoRAFFI

Հիւրերը ողջունեցին Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի սկաուտները եւ Շրջանային Վարչութեան շեփորախումբը:

Հանդիսութեան բացման խօսքը արաբերէնով արտասանեց եւ ներկաներուն բարի գալուտ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Սիլվա Սաղըրեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Անգամ մը եւս մարզական մեծ եւ կարեւոր իրադարձութիւն

Հանդիսութեան ներկաներու շարքին էին Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Յայսալ Քարամէի ներկայացուցիչ Յայսալ Ալամէտտին (Լիբանանի կոլֆի ֆետերասիոնի նախագահ), երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հարցերու խորհրդարանական յանձնախումբի նախագահ, երեսփոխան Սիմոն Ապի Ռամիա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Միհրան Շիմշիրեան եւ Ստեփան Տէր Պետրոսեան, Միջազգային Ողիմպիական Կոմիտէի անդամ Թոնի Խուրի, փինկ-փոնկի միջազգային ֆետերասիոնի անդամ եւ փինկ-փոնկի Ֆրանսախօս երկիրներու նախագահ Միշէլ Տը Շատարեւեան, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի նախագահ Անթուան Շարթիէ, Լիբանանի փինկ-փոնկի ֆետերասիոնի նախագահ եւ Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի անդամ Սելիմ Հաթ Նիքոլա, Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի նախագահ Քամալ Յախըր, Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի նախագահ եւ Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի անդամ եղբ. Վաչէ Ծատուրեան, Լիբանանի աթլետիկ միջազգային ֆետերասիոնի նախագահ Ապտալա Շեհապ, Լիբանանի ճատրակի ֆետերասիոնի նախագահ Նեպիլ Սըննօ, Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի փոխ նախագահ Ռուպէր Ապի Ապտալա, Պէյրութի միջազգային մարաթոնի յանձնախումբի նախագահ Մէյ Խալիլ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ, տարբեր ֆետերասիոններու, քաղաքապետութիւններու ներկայացուցիչներ, թաղապետներ, մարզական լրագրողներ եւ հրակիրներ:

մը մեզի իրարու մօտ կը համախմբէ, եւ այս համախմբումին ընդմէջէն Հ.Մ.Ը.Մ. կու գայ բարձրացնելու իր եւ Լիբանանի անունը՝ միջազգային գետնի վրայ: Դուին Մունջօղլեանի կատարած մեծ իրագործումը մեզի՝ Հ.Մ.Ը.Մ.ի համար եթէ կը նկատուի հպարտալի երեւոյթ մը, անիկանոյնքան կարեւոր կը նկատուի լիբանանեան մարզաշխարհին համար, որ գոհունակութեան բոլոր պատճառները ունի նման աստղեր ունենալուն համար»:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: «Հ.Մ.Ը.Մ. 1924էն՝ Լիբանանի մէջ հիմնադրութենէն ի վեր միշտ կարելին ըրած է աստղեր եւ ախոյեաններ տալու լիբանանեան մարզաշխարհին, անհատական թէ խմբային մարզաձեւերու մէջ, նշեց եղբ. Քէշիշեան եւ աւելցուց, շուրջ 15 օր առաջ էր, երբ Դուին Մունջօղլեան կարեւոր նուաճում մը արձանագրեց՝ ապահովելով Լոնտոնի 2012ի ողիմպիականի մասնակցութեան տոմար: Անոր իրագործումը ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի, այլեւ ամբողջ Լիբանանի համար յաղթանակ մը կը նկատուի, որովհետեւ ի վերջոյ ան Անգլիոյ մէջ հանդէս պիտի գայ եւ իր մրցումները պիտի կատարէ Լիբանանի դրօշին ներքեւ»:

Շարունակելով, եղբ. Քէշիշեան ըսաւ. «Եթէ Դուինին հայրը՝ Րաֆֆի Մունջօղլեանը 1974-1991, 17 տարի Լիբանանի ախոյեան հանդիսանալէ բացի այլ իրագործումներ եւս կատարեց արաբական, ասիական եւ միջազգային ախոյ-



Թիւիւն հիւն երը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضى



Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵՆՏՐՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

30ԴԴ ՏԱՐԻ, 2011, ԹԻՒ 11 (353)

ԽՄԲԱԳԻՐ

Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ

Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Պատրիկ Կիւլպէնկեան

Արօ Մոսիկեան

Գօգօ Մկրտիչեան

Վահան Համամճեան

Տիրան Շահինեան

Սալբի ճէճեան

Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ներսէս Արք. Բախտիկեան*, Յարութ

Սրկ. Շէրնէգեան, Գրիգորիս

Պողարեան, Գէորգ Թորոյեան,

Շաղիկ Գէորգեան եւ շրջաններու

թղթակիցներ:

Էջադրում - Արշօ Պալեան

Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան

Colour Separation - Photogravure Paklayan

Կողբի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

Պուրճ Համուտ, Եհնիշեանի Թաղ

«Սեւան» Շէնք, Գ. Յարկ

Հեռ: 01/248043, Fax: 01/260117

E-mail: marzig@homenetmen.org

P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին

հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:

Տարեկան բաժանորդագրութեան

սակ ծշողած է 48000 Լ.ո.:

Լիբանանէն դուրս թերթին

բաժանորդագրութիւնը

կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի

եւ Շրջանային Վարչութիւնները:

Թերթը ուղղակի Լիբանանէն

կը ստացուի անձնական

բաժանորդագրութեամբ

(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան

եւ Եւրոպական երկիրներ \$70,

Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հաղորդագրութիւն 3
- Անդրադարձ 5
- Պատմութիւն 10
- Ակնարկ 13
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 15
- Մեր Կորուստները 37



ԲԱԺԻՆՆԵՐ

- Ձօն 12
- Սիջազգային 14
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40





ԽՆՄԲԱԳՐԱԿՆԵՆ

ՀԱՄԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Դիրին չէ ժամանակին հետ քայլ պահելը: Օրէ օր կեանքի ընթացքը աւելի կ'արագանայ, կը մեքենականանայ եւ կ'արդիականանայ: Կեանքի ընթացքին հետ կը փոխուին նաեւ հասակ նետող սերունդին դիմագիծը:

Կ'ունենանք սերունդ մը, որ շատ եւ շուտ կը ծանծրանայ, որովհետեւ գրեթէ ամէն ինչ ունի իր շուրջ: Դիրին չէ գոհացնել զայն:

Կ'ունենանք սերունդ մը, որ կը մերժէ դաստիարակչական դասական միջոցները, որովհետեւ արդի արհեստագիտութեան կարելիութիւններով ամէն ինչ կրնայ ունենալ ծայնով ու նկարով, ոչ թէ մենախօսութեամբ՝ դասախօսութեամբ, այլ՝ «ան-լայն» երկխօսութեամբ, յաճախ նաեւ հաւաքական զրուցատրութեամբ:

Կ'ունենանք սերունդ մը, որ չի բարարուիր գաղութայինով ու հայկականով, որովհետեւ «Համաշխարհային գիւղի» հրապոյրները կը շլացնեն զինք ամէն առիթի:

Վերջապէս, կ'ունենանք սերունդ մը, որ ինքզինք հեռու կը պահէ ազգային-միութենական կառոյցներէ, որովհետեւ անոնց գործելաոճին մէջ կը տեսնէ որոշ դանդաղութիւն եւ սովորամոլութիւն:

Մտահոգիչ այս բոլոր երեւոյթները լայնօրէն լուսարձակի տակ առնուեցան Հ.Մ.Բ.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի ռազմավարական ծրագրաւորումի թղթածրարին քննութեան ընթացքին, ուր հիմնական առաջնահերթութիւն նկատուեցաւ նոր սերունդին հետ ժամանակի՝ լեզուով՝ արդի արհեստագիտութեամբ խօսելու անհրաժեշտութիւնը:

Առ այդ, «Համակազմակերպական արհեստագիտութիւն» վերնագրին տակ, Պատգամաւորական Ժողովը առաջադրեց միութենական հաղորդակցութեան նոր որակի մը ստեղծումը բոլոր մակարդակներու վրայ: Կայքէջ, համացանցային պատկերասփիւռի կայան, ռատիոկայան, անդամական տուեալներու շտե-

մարան, դաստիարակչական նիւթերու եւ երգերու բաժիններ պիտի ըլլան այն նորութիւնները, որոնք պիտի փորձեն բարարել այսօրուան դժուարահաճ սերունդին պահանջները, խաղերու ու ժամանցի հետ ազգային դաստիարակութիւն եւ ինքնութիւն փոխանցելով անոնց:

Արդի արհեստագիտութեան կարելիութիւնները պիտի օգտագործուին նաեւ միութենական աշխատանքներու արագ եւ հեզասահ կազմակերպման համար, շրջանները ամբօրէն կապելով իրարու: Նամակագրութեան ժամանակը պատմութեան անցած է այլեւս: Ժամը-ժամուն եւ վայրկեանը վայրկեանին կատարուող փոխանցումները ժամանակի ահագին խնայողութիւն կրնան կատարել, իսկ համացանցային ժողովները ճամբորդական եւ նիւթական մեծ տաղտուկներ կրնան լուծել:

Ինչո՞ւ չօգտուիլ գիտութեան բարիքներէն եւ զանոնք չծառայեցնել ազգային-միութենական մեր նպատակներու իրագործման, հասնելու համար աշխարհի չորս ծագերը, հոն ուր կ'ապրի նոյնիսկ մէկ հայ: Համացանցը եւ անոր «կրտսեր եղբայրներ»ը՝ «Ֆէյսպուք»ը, «Եւ թիւայ»ը, «Թուիթթըր»ը, «Սքայփ»ը «Մայ սփէյս»ը եւ ուրիշներ տեղեկատուական ազդու եւ արագ միջոցներ են, որոնք ճիշդ ձեւով օգտագործուելու պարագային կրնան քարոզչական հսկայական դեր խաղալ, հազարաւորներ ներգրաւել, մթնոլորտ ստեղծել եւ աշխատանքի յարմար ենթահող պատրաստել:

Պատգամաւորական Ժողովը այս իմաստով առաւ կարելոր քայլ մը, երբ անվերապահօրէն որդեգրեց ռազմավարական ծրագրաւորումի թղթածրարին այս կէտը, համակազմակերպական արհեստագիտութեան ընդհանուր շրջագիծը ճշդելով եւ մասնագիտական համապատասխան գրասենեակի մը ըստեղծումը նախատեսելով:

Ճամբան բացուած է արդէն: Կը մնայ ընթանալ յառաջ:

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովէն ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իր Ա. լիազումարը կայացուց նստավայր Պէյրութի մէջ, 5-7 Նոյեմբեր 2011ին:

Լիազումարը առաջին հերթին իր ներկայացուցիչներուն միջոցով ընդհանուր գիծերու մէջ լսեց Շրջաններու մասին զեկուցում մը եւ անդրադարձաւ անոնց դիմագրուած դժուարութիւններուն, ապա՝ կանգ առաւ 10րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովի առաջարկ-բանաձեւերուն վրայ, որոնք կրկին մանրամասնօրէն արծարծուեցան եւ յետ ուսումնասիրութեան Կեդրոնական Վարչութիւնը մշակեց իր քառամեայ (2011-2015) գործունէութեան ուղեգիծ-գործելաձեւը:

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Միութեան ուժեղացումն ու հզօրացումը ամրապնդելու նպատակով, առաջադրուեցաւ հետամուտ ըլլալ մարդուժի պատրաստութեան, նոյնպէս՝ զարկ տալ ցամաքամասային ձեռնարկներու՝ ըլլան անոնք համագումարներ, դասընթացքներ, բանակումներ եւ մարզախաղեր:

Որոշուեցաւ հետամուտ ըլլալ վերջին շրջանին Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին վերամիացած եւ կամ նորաստեղծ Մեկուսի Շրջաններու ներքին կազմակերպչական աշխատանքներուն, ինչպէս նաեւ՝ ի պահանջեալ հարկին նոր գաղութներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներքեւ վառ պահել հայու դիմագիծն ու դրոշմը:

Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպչական հիմքերով առաջնորդուելու համար ճշդեց իր ներ-վարչական յարաբերական գործընթացը՝ պաշտօններու դասաւորումներ կատարելով եւ շրջաններու հետ իր յարաբերութեանց գործելաոճը վերահաստատեց շարունակել փոխադարձ հասկացողութեամբ:

Կեդրոնական Վարչութիւնը շեշտեց հայրենի պետութեան հետ յարաբերութիւնները առաւել եւս սերտացնելու կարեւորութիւնը՝ պաշտօնական այցելութեամբ եւ երկիրներու մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպաններուն հետ, ի հարկին՝ գործակցութեան կարելիութիւնը ընդարձակել եւ այցելութեանց ընթացքին ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցը եւ անոր աշխարհատարած գործունէութեան մարկերը:



Բ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

Վերջին տասնամեակներուն, ժողովուրդներու անելավայրերու տեղաշարժը նաեւ պատճառ դարձաւ հասկացողութիւններու եւ կենցաղային ըմբռնումներու փոփոխութեան, թեւ տալով համաշխարհայնացման արագընթաց կարգավիճակին: Հայութիւնը եւս չէր կրնար անմասն մնալ այս պարտադրուած իրավիճակէն:

Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ը իր գաղափարաբանութեամբ եւ յատկապէս հայ ժողովուրդին անսակարկ ծառայելու իր առաքելութեամբ, 9րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովով քննելէ ետք վերոնշեալ կացութիւնը, պարտք կը դնէր անցեալ քառամեակի Կեդրոնական Վարչութեան յառաջացնելու Ռազմավարական Ծրագրաւորումի Յանձնախումբ մը, մասնագիտական հիմքերով քննարկելու շրջաններու միութենական գործունէութեանց տուեալ դրութիւնը եւ 10րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովին ներկայացնելու ապագայի տեսիլքով միութեան հզօրացման կառոյցն ու որդեգրելիք գործելաձեւը:

Արդ, Կեդրոնական Վարչութիւնը, իր կարգին, իր օրակարգի հիմնահարցերէն համարելով փոխանցուած թղթածրարը, երկարաշունչ նիստով զայն որդեգրեց եւ առաջադրեց հանգրուանային դրութեամբ անյապաղ իրագործել: Նախատեսուած ծրագիրը յաջողցնելու համար յառաջացուց յանձնախումբ մը, որ իր կարգին պիտի ճշդէ գործադրութեան հանգրուաններու յաջորդական եւ ժամանակագրական գործընթացը եւ հետագային պիտի ստեղծուին անհրաժեշտ գործադիր գրասենեակներ:

Գ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

Միութեան ողնասիւնը համարուող սկաուտութիւնը եւ անոր ճամբով յաջորդական սերունդներու դաստիարակութիւնը ապահովելու ու մերօրեայ պահանջներուն եւ յատկապէս յառաջխաղացքներ ձեռք բերելու նպատակով, առաջադրուեցաւ Հայաստանի մէջ կայացնել համա-Հ.Մ.-Ը.Մ.ական խմբապետական Չ. համագումարը, ծրագրելու եւ իրագործելու համար խմբաւորումներու խմբապետական կազմերուն յատուկ վերաորակաւորման դասընթացքներ, ինչպէս նաեւ հիմնուելով նախորդ փորձառութեան վրայ համակարգելու համար Արարատեան կարգը եւ ընդհանուր բանակումի նախաժրագիրը:

Սկաուտական կարգերու գիտելիքները այժմեականացը-

նելու հեռանկարով, որոշուեցաւ վերատեսութեան ենթարկել այժմու գիրքերը եւ հետագային, ի հարկին, զանոնք վերահրատարակել նոր յարմարեցումներով: Համագումարը պիտի մշակէ նաեւ բոլոր շրջաններու համար երէցական կարգերու գիտելիքները, առ ի պատրաստութիւն գիրքերու հրատարակութեան:

Կեդրոնական Վարչութիւնը կարելորեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Համաշխարհային Սկաուտական Շարժումին անդամակցութիւնն ու գործօն դերակատարութիւնը եւ անոր ճամբով ստեղծուած սերտ յարաբերութիւնները միջազգային սկաուտական մարմիններուն հետ, թելադրեց յատուկ ռազմավարութեամբ առաւել եւս զարգացնել ու ամրապնդել գործակցութեան կարելիութիւնները եւ միջազգային սկաուտական միջոցառումներուն առաւելագոյն թիւով մասնակցութիւն բերել ի նպաստ Հայ Դատի աշխատանքներուն:

Կեդրոնական Վարչութիւնը անդրադառնալով հայ սկաուտութեան հիմնադրութեան 100ամեակին, որուն ստեղծման ռահվիրան կը համարուի Հ.Մ.Ը.Մ.ը, որոշեց 2012ին յատուկ ձեռնարկներով եւ տօնակատարութիւններով հանդէս գալ կազմակերպական բոլոր շրջաններու մէջ:

Դ. ՄԱՐԶԱԿԱՆ

Մարմնակրթանքը մարզախաղերով կիրարկելու եւ ազգային ոգի թրծելու նպատակադրութենէն առաջնորդուած եզրակացուեցաւ այս քառամեակին համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը անգամ մը եւս իրականացնել հայրենի Մայր հողին վրայ:

Շրջաններէն ներս, ըստ հնարաւորութեան եւ կարելիութեան, կիրարկել զանազան մարզախաղեր եւ թափ տալ մարզական դպրոցներու, ուր փոքր տարիքէն մարզիկ-մարզիկուհիներ հնարաւորութիւնը կ'ունենան կազմաւորուելու եւ պատրաստուելու ըստ իրենց կիրարկած մարզաձեւին:

Համահայկական խաղերուն մասնակցիլ աւելի մեծ թիւով եւ ըստ կարելիութեան լրիւ խումբերով՝ բոլոր մարզախաղերուն հաւասարապէս:

Ե. «ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

Միութեան գաղափարաբանութիւնը արտայայտող եւ հայ ժողովուրդի ձգտումներուն մէկ փարոսը եղող «Մարզիկ» պաշտօնաթերթը տարածելու հրամայականէն թելադրուած անխուսափելի համարուեցաւ «Մարզիկ»ին մատակարարել բարոյական եւ նիւթական աջակցութիւն:

Առաջադրուեցաւ Սփիւռքի որոշ շրջաններուն համար խմբագրականները օտար լեզուով թարգմանել եւ անոր լրիւ բովանդակութիւնը տեղադրել կայքէջին վրայ, հասկնալի դարձնելու համար բոլորին:

Զ. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿ

Կեդրոնական Վարչութիւնը կանգ առաւ Հայկական Յեղասպանութեան 100ամեակին՝ 2015ին համահայկական



photo by Ashmag

տարողութեամբ տեղի ունենալիք յիշատակի հանդիսութեանց:

Առ այդ, իր շարքերուն ամէնուրեք եւ անխտիր կը թելադրէ բոլոր ձեռնարկներուն խիտ շարքերով եւ ամբողջական մասնակցութիւն, նոյնպէս մեր ժողովուրդի գոյապայքարին ի խնդիր կազմակերպել Հ.Մ.Ը.Մ.ի ոգին ներշնչող՝ որբանոցէն ծնած միութեան արժանավայել հանդիսութեամբ ոգեկոչել Յեղասպանութեան 100ամեակը:

Է. 95ԱՄԵԱԿ

2013ին Շրջաններէն ներս փառաշուք հանդիսութեամբ տօնակատարել Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95ամեակները, հանրութեան եւ օտարներուն աւելի ծանօթացնելով Հ.Մ.Ը.Մ.ի ազնիւ գաղափարախօսութիւնը եւ հայ ժողովուրդի անհերքելի պահանջատիրութիւնը:

95ամեակի առիթով պատրաստել խորհրդապատկեր (լուկո)՝ տարուան ընթացքին զայն օգտագործելու, ինչպէս նաեւ ձեռնարկներուն՝ շքանշաններով պարգեւատրել վաստակաւոր, բեղուն եւ յիշատակելի անցեալ ունեցող քոյր-եղբայրներ:

Ը. ԿԱՅՔԷԶ

Արդի հաղորդակցութեան արագընթաց պայմաններէն օգտուելու համար, նպատակայարմար նկատուեցաւ յարատեւ եւ նորագոյն միջոցներով օժտել միութեան կայքէջը, ստեղծել նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի յատուկ կայքէջ մը եւ զարգացնել միութեան կանոնադրական համացանցային աշխատանքները:

Թ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

Ընդհանուր սկզբունքներէ մեկնած եւ ծրագրուած աշխատանքները լաւագոյնս իրագործելու եւ յաջողցնելու հեռանկարով, որոշուեցաւ գործել յանձնախումբերու դրութեամբ, որոնք իրենց մասնագիտութեամբ ու փորձառութեամբ քառամեայ գործունէութեան ընթացքին պիտի ունենան մնայուն բնոյթ, ինչպէս՝ ռազմավարական, սկաուտական, տնտեսական, կայքէջ, «Մարզիկ», քոյր մասնաճիւղեր, ուրիշներ պիտի յառաջանան ժամանակաւոր. անոնք ձեռնարկներէն առաջ կեանքի կոչուելով, պիտի կարենան կազմակերպել ու վարել ճշդուած գործունէութիւնը:

Քառամեայ ծրագրի իւրաքանչիւր ձեռնարկի յաջողութիւնը կը վստահուի Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ ընտանիքին, որուն դափնեպսակն է իր յաւերժահնչիւն եւ յաւերժապանծ նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ը:

11 Նոյեմբեր 2011

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԿՈՂՔԻՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀՄԸՄԻ 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն ընտրուած Հ.Մ.Ը.Մ.Ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը իր գործունէութեան Ա. լիազուժարը կատարեց Պէյրութի մէջ, Լիբանան, 5-7 Նոյեմբեր 2011ին: Ժողովական իր աշխատանքներու կողքին, կազմը պաշտօնական այցելութիւններ տուաւ հայ հոգեւոր պետերու, ազգային մարմիններու եւ հաստատութիւններու:



ղաստիարակութեան: Ան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի կատարած աշխատանքը՝ Հայաստանէն մինչեւ Սփիւռքի տարբեր գաղութներ եւ յիշեցուց, որ մեր կեանքին մէջ գործող բոլոր կառոյցները պէտք է ծրագրեն ու գործեն համահայկական հայեցակէտով՝ ժողովուրդին ծառայութիւնը ունենալով իրենց կեանքին ու գործին կիզակէտը:

Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց Արամ Ա. Կաթողիկոսին՝ Կեդրոնական Վարչութեան կազմը ընդունելուն համար: Ան յայտնեց, որ յառաջիկայ քառամեակին զանազան մարտահրաւէրներ կան Կեդրոնական Վարչութեան դիմաց, մանաւանդ Ռազմավարական Ծրագրի գործադրութիւնը, զոր Պատգամաւորական Ժողովը պարտք դրաւ Կեդրոնական Վարչութեան ուսերուն: Հ.Մ.Ը.Մ.ը միշտ կը գիտակցի, որ Վեհափառ Հայրապետը զօրակից եւ նեցուկ է իր աշխատանքներուն, նշեց եղբ. Մկրտիչեան:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՒՆ

Արամ Ա. Կաթողիկոսի այցելութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը մեկնեցաւ «Շաղգոյեան» կեդրոն եւ հանդիպում մը ունեցաւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ղեկանին հետ: Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան բարի գալուստ մաղթեց կազմի անդամներուն եւ շեշտեց, որ յաջորդական Կեդրոնական կոմիտէներ միշտ աջակից եղած են Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի բոլոր աշխատանքներուն: Իր կարգին, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան նշեց, որ Կեդրոնական Վարչութիւնը փափաքեցաւ այցելել Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին՝ փոխադարձ գործակցութեան պատրաստակամութեամբ:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԵՒ «ԱԶԴԱԿ»Ի ԾԱՆՕԹԱՅՈՒՄ

Ապա, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամները այցելեցին «Վանայ Զայն» ձայնասփիւռի կայան եւ ծանօթացան անոր աշխատանքներուն: Անոնք այցելեցին նաեւ «Ազդակ» օրաթերթ, ուր զիրենք ընդունեց տնօրէն Շահան Գանտահարեան: Փոխադարձ ծանօթացումէ ետք, Կեդրոնական Վարչութեան եղբայրները յատուկ կերպով նշեցին, որ «Ազդակ»ի կայքէջը շատ մեծ օգտակարութիւն եւ ընդարձակ տարածում ունի հայ կեանքին մէջ: Շահան Գանտահարեան տեղեկութիւններ տուաւ օրաթերթի աշխատելաճին եւ վերջին իրագործումներուն մասին: Փոխադարձ համագործակ-

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄՕՏ

Լիազուժարի նախօրեակին՝ Շաբաթ, 5 Նոյեմբեր 2011ին, Կեդրոնական Վարչութիւնը այցելեց Անթիլիասի Մայրավանք՝ Սեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութիւնը ստանալու: Այցելութեան ընթացքին, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Կաթողիկոսին ծանօթացուց Կեդրոնական Վարչութեան արտանրատավայրի անդամները, որոնք Լիբանան ժամանած էին Հայաստանէն, Արեւմտեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգներէն, Գանատայէն, Հարաւային Ամերիկայէն, Աւստրալիայէն եւ Սուրիայէն: Ապա ան նշեց, որ Ա. լիազուժարի նախօրեակին Կեդրոնական Վարչութիւնը փափաքեցաւ Հայրական իր օրհնութիւնը ստանալ:

Արամ Ա. Կաթողիկոս շնորհաւորեց նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը՝ թելադրելով շարունակել մարմնակրթական այս կազմակերպութեան առաքելութիւնը: Հ.Մ.Ը.Մ.Ի մասին խօսելով, Արամ Ա. Կաթողիկոս զայն նկատեց մեծ դպրոց՝ լծուած նոր սերունդներու բարոյական ու ազգային



ցուլթիւնը շարունակելու խոստումով՝ Կեդրոնական Վարչութեան եղբայրները մեկնեցան «Շաղգոյեան» կեդրոնէն:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Կեդրոնական Վարչութեան կազմը այցելեց նաեւ Պուրճ Համուտի քաղաքապետարան, ուր դիմաւորուեցաւ քաղաքապետ եղբ. Անդրանիկ Մսրրլեան եւ քաղաքապետական խորհուրդի անդամ Նեյրի Վէքիլեանի կողմէ: Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ծանոթացուց Կեդրոնական Վարչութեան անդամները եւ նշեց, որ քաղաքապետ Անդրանիկ Մսրրլեան նիւթապէս եւ բարոյապէս միշտ թիկունք կանգնած է Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի թէ՛ Շրջանային Վարչութեան եւ թէ՛ մասնաճիւղերուն, ի պահանջեալ հարկին նաեւ Կեդրոնական Վարչութեան: Իր կարգին, եղբ. Անդրանիկ Մսրրլեան բարի գալուստ մաղթեց Կեդրոնական Վարչութեան եղբայրներուն Պուրճ Համուտի մէջ եւ հակիրճ ծանոթութիւններ տուաւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան գործունէութեան մասին:



Կեդրոնական Վարչութեան եղբայրները շնորհակալութիւն յայտնեցին Պուրճ Համուտի քաղաքապետութեան ցուցաբերած գործակցութեան համար եւ մաղթեցին, որ համագործակցութիւնը շարունակուի յառաջիկային եւս:



ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՂԲ. ՎԱՐԴԳԻՍ ՏէՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԵՒ ԼԻԶՊՈՆԻ ՀԻՆԳ ՀԵՐՈՄՆԵՐՈՒ ՇԻՐԻՄՆԵՐՈՒՆ

Լիազումարի աշխատանքներուն երկրորդ օրը, Կիրակի, 6 Նոյեմբեր 2011ի առաւօտեան, Կեդրոնական Վարչութեան եղբայրները այցելեցին Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատուն եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Հ.Մ.Ը.Մ-ի առաջին Կեդրոնական Վարչութեան նահատակ ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի եւ Լիզպոնի հինգ հերոսներու յիշատակին: Այս առիթով, անոնք ծաղկեպսակ մը գետեղեցին Հ.Յ.Դ-ի պանթէոնին, ուր կը հանգչի եղբ. Տէր Կարապետեանի շիրիմը եւ Լիզպոնի նահատակներու դամբանաքար-յուշակոթողին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄէՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Լիազումարի աւարտին, Երեքշաբթի, 8 Նոյեմբերին, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրները այցելեցին Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատուն եւ տեսակցեցան դեսպան Աշոտ Քոչարեանի եւ հիւպատոս Կարէն Մաթեւոսեանի հետ: Տեսակցութեան ընթացքին Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան յայտնեց, որ Ա. լիա-



www.aztagdaily.com
photo by Ashnag©

գումարը Լիբանանի մէջ ըլլալով, Կեդրոնական Վարչութիւնը փափաքեցաւ անպայման այցելել Հայաստանի դեսպանատուն՝ ծանօթացման հանդիպումի մը համար: Ապա, ան ծանօթացուց Կեդրոնական Վարչութեան անդամները եւ շեշտեց դեսպանատուն-Կեդրոնական Վարչութիւն գործակցութեան կարեւորութիւնը:

Դեսպան Աշոտ Քոչարեան իր կարգին բարի գալուստ մաղթեց բոլորին՝ Հայաստանի դեսպանատան մէջ: Ան ներկայացուց դեսպանատան աշխատանքները, ի մասնաւորի Հայաստանի քաղաքացիութեան դիմումներու ծիրին մէջ:

Կեդրոնական Վարչութեան հայրենի անդամ եղբ. Բագրատ Եսայեան ամփոփ ծանօթութիւն մը տուաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկառուտական գործունէութեան մասին՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Համաշխարհային Սկառուտական Շարժումի ծիրէն ներս:

ԱՅՆՃԱՐԻ Մէջ

Հայաստանի դեսպանատունէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ուղղուեցաւ Այնճար հայաւան, ուր դիմաւորուեցան՝ Հ.Յ.Դ. Այնճարի ներկայացուցիչներուն, Այնճարի քաղաքապետ Կարո Փամպուրեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի վարչութեան կողմէ:

Այնճարցիներ հիւր պատւիրակութեան ներկայացուցիչն գիւղին պատմականը, քաղաքապետութեան աշխատանքները եւ ապագայի ծրագիրները:

Այնճարի մէջ, Կեդրոնական Վարչութեան անդամները այցելեցին Հ.Յ.Դ. «Սարգիս Զէյթլեան» ժողովրդային Տուն, Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ, Ս. Պօղոս եկեղեցի եւ Մուսա Լերան նահատակներու յուշահամալիր:



with the complements of

Restaurant Al-Mayass



photo by Ashmag©

Կեդրոնական Վարչութեան եւ
Լիբանանի Շրջանային Վարչութեան
անդամներու յիշատակի նկար:



2011ի ախոյեանական տիտղոսներու
արժանացած քոյրերն ու եղբայրները
Շրջանային Վարչութեան ատենապետին հետ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ՝ Ի ՊԱՏԻՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐԸՆՏԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Իր առաջին լիազուգումարը Լիբանանի մէջ կատարող Հ.Մ.Ը.Մ.ի նորընտիր Կեդրոնական Վարչութեան ի պատիւ, Կիրակի, 6 Նոյեմբերի երեկոյեան, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց ընդունելութիւն մը, որ տեղի ունեցաւ «Ազգակ»ի «Փիւնիկ» սրահին մէջ: Ընդունելութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի նախկին Կեդրոնական Վարչութիւններու եղբայրներ, Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, Սկաուտ. Խորհուրդներու ներկայացուցիչներ եւ կարեւոր թիւով ծնողներ:

Սրահին մուտքին, Կեդրոնական Վարչութեան անդամները դիմաւորուե-

ցան կարգապահ շարքերով պատուի կանգնած Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներու կողմէ:

Լիբանանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներուն ունկնդրութենէն ետք, ընդունելութեան բացման խօսքը արտասանեց եւ նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Հայկ Թապաքեան: Բարի գալուստի խօսքէ ետք, եղբայրը յոյս յայտնեց, որ օգտաշատ նման հանդիպումներ կը կրկնուին ապագային եւս:

Այս առիթով գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի, Պէյրութի եւ Ճիւնիի մասնաճիւղերէն սկաուտներ հանդէս եկան երգով, պարով եւ արտասանութեամբ: Անոնք

իրենց տպաւորիչ, անմիջական ու հարգատ ներկայացումներով գրաւեցին ներկաներուն ուշադրութիւնը եւ արժանացան բոլոր ծափահարութեան:

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ նշեց, որ ընդունելութիւնը կազմակերպուած է նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամներուն Լիբանան այցելութեան ի պատիւ: Ան աւելցուց, որ մարզական խաղերու տարեվերջը մօտեցած ըլլալով, Շրջանային Վարչութիւնը յարմար նկատած է Կեդրոնական Վարչութեան անդամներու ներկայութեան պարգեւատրել Հ.Մ.Ը.Մ.ական այն մարզիկ-մարզիկուհիները, որոնք 2011ի ընթացքին տիրացած են լիբանանեան ախոյեանութիւններու եւ բարձր պահած են միու-



Թեան անունը: Այս առիթով, ան յատկապէս անդրադարձաւ քոյր Դուին Մունջօղլեանի իրագործումին: Քոյրը Հոկտեմբերի կիսուն Յորդանանի մէջ իլեց Արեւմտեան Ասիոյ փինկ-փոնկի ախոյեանութեան տիտղոսը՝ ձեռք ձգելով 2012ի Լոնտոնի ողիմպիական խաղերուն մասնակցութեան իրաւունքը: Եղբ. Քէշիշեան ներկայացուց նաեւ գանազան մարզաձեւերու մէջ Հ.Մ.-Ը.Մ.ական մարզիկներու արձանագրած յաջողութիւնները՝ հաստատելով, որ անոնք հպարտութեամբ կը լեցնեն հայութեան սրտերը:

Իր խօսքին աւարտին, եղբ. Քէշիշեան յայտնեց, որ Շրջանային Վարչութիւնը եւ իր յանձնախումբերը ժրջան ու հոգածու կերպով կը հսկեն միութեան մարզական խումբերուն՝ միշտ առաջնահերթութիւն տալով մանուկներուն եւ պատանիներուն, որոնք կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ի ապագան:

Խօսքէն ետք, եղբ. Քէշիշեան պատուոյ գիրեր յանձնեց 2011ին ախոյեանական տիտղոսներ իլած հետեւեալ մարզիկ-մարզիկուհիներուն.- ճատրակի մարզաձեւին մէջ՝ Նարոտ Գլրպոզեան, Կարէն Խալոյեան, Մարինա Գարակիւլեան եւ Քնարիկ Մուրատեան (Ասիոյ ցամաքամասի 2011ի ախոյեան): Փինկ-փոնկի մարզաձեւին մէջ՝ Լարա Քէչէպաշեան, Նոէլ Քէշիշեան, Դուին Մունջօղլեան (Լիբանանի աղջկանց խմբային առաջնութեան եւ անհատական տարիքային ախոյեանութիւններու տիրացած) եւ Աւօ Մունջօղլեան (21 տարեկանէն վար Լիբանանի ախոյեան): Այս առիթով, փինկ-փոնկի մարզաձեւին մէջ իր ունեցած մեծ ներդրումին համար, Շրջանային Վարչութիւնը յուշանուէրով մըն ալ պարգեւատրեց եղբ. Րաֆֆի Մունջօղլեանը:



Եղբ. Յակոբ Քէշիշեան յուշատախտակով մը կը պատուէ քոյր Դուին Մունջօղլեանը:



Եղբ. Յակոբ Քէշիշեան յուշատախտակով մը կը պատուէ եղբ. Րաֆֆի Մունջօղլեանը:

ընտանիքին յաջողութիւնները տեսնելով:

Եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ Հ.Մ.-Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած Կեդրոնական Վարչութեան անդամները որոշած են իրենց առաջին լիազումարը Լիբանանի մէջ կատարել՝ նկատի ունենալով լիբանանահայութեան ունեցած կարեւոր դերակատարութիւնը հայ կեանքին մէջ: Ան իր ուրախութիւնը յայտնեց, որ առիթը ստեղծուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքի ներկայացուցիչներուն հետ այս հանդիպումը ունենալու եւ ծանօթացման կարելիութիւնը ստեղծելու:

Աւարտին, եղբ. Մկրտիչեան ներկաներուն ծանօթացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները:

Ընդունելութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



**Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԻՒ. ՄԱՍ**

Զահլե՛ մէկ պատգամաւոր՝ Ներսէս Գազազեան:

Թրիփոլի՛ մէկ պատգամաւոր՝ Յովհաննէս Շահինեան
(Պէյրուսի մասնաճիւղէն):

Լիազօրուած պատգամաւորներէն զատ, խորհրդակցական ձայնով կը հրաւիրուին Ալպէր Յակոբեան, Օննիկ Պէօճէքեան, Վահան Ղազէրեան, Արամ Քիւրտեան, Գեղամ Ազկիւլեան եւ Վահրամ Զոքքարեան:

Պատգամաւորական ժողովը կը զբաղի գլխաւոր երկու օրակարգով՝ 1. Սուրիոյ եւ Մեծն Լիբանանի շրջանի համար անհրաժեշտ է Շրջանային Վարչութեան մը կազմութիւնը, եւ 2. Շրջանային Վարչութեան ընտրութիւն:

«Պատգամաւորական ժողովը բացարձակ միաձայնութեամբ

հաստատեց Շրջանային Վարչութեան մը կազմութիւնը...: Պէյրուսի Սուրիոյ եւ Մեծն Լիբանանի կեդրոնը ըլլալուն հանգամանքով, Պատգամաւորական ժողովը որոշեց զայն որպէս Շրջանային Վարչութեան վայր» (Ատենագրութիւն Ա. Պատգամաւորական ժողովի, 1 Ապրիլ 1929):

Անդրանիկ Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին տոքթ. Ալեքսան Պէզճեան, Զարեհ Տօնապետեան, Տաճատ Սրապեան, տոքթ. Յակոբ Գասապեան, Յովհաննէս Շահինեան, Ալպէր Յակոբեան եւ Զարեհ Սարեան:

Շրջանային Վարչութեան այս կազմը երկար կեանք չ'ունենար: Անդամներէն ոմանք քաղաքէն կը մեկնին, ուստի վերակազմութեան կ'ենթարկուի հետեւեալ ցանկով.՝ տոքթ. Ա. Պէզճեան, Վահան Թորոսեան, Տաճատ Սրապեան, Սիմոն Թերճանեան, Խորէն Սուքիասեան, տոքթ. Յակոբ Գասապեան եւ Ճորճ Միսիրեան:

Շրջանային Վարչութեան առաջին քայլերուն մասին կը կարդանք.

«Շրջանային Վարչութիւնը գործի ձեռնարկելուն, իր առաջին քայլերուն մէջ հանդիպեցաւ նիւթականին հետ նաեւ մասնագիտական դժուարութիւններու: Եւ սակայն, շարժումը իր սրտին հարազատ զգալով, գօտեպնդուած, անվատ շարունակեց շրջանի կազմակերպման գործը: Ան ամէն ճիգ թափեց բարձրացնելով շրջանի կարգապահական ոգին... այսպէսով իսկ հարթելով ճանապարհն ու դժուարութիւնները...»:

Այդ օրերուն «գրեթէ բոլոր մասնաճիւղերուն մէջ կը պակսին թէ՛ մարզական եւ թէ՛ սկստական մասնագետները: Այս գոյգ շարժումներն ալ, գրեթէ, իրենց նախնական վիճակին մէջ են, բացի Փութպոլէն, որուն խումբերը, տեղական հայ եւ օտար խումբերուն հետ բաղդատելով առաջին շարքերուն վրայ կը գտնուին»:

Շրջանային Վարչութեան մը բարոյական ազդեցութիւնը, իբրեւ վերին մարմին, իր բարեբար դերը պիտի ունենար եւ աւելի հիմնաւորէր Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը աշխարհագրական ընդարձակ տարածութեան մը վրայ: Մասնաճիւղերը, իրենց կարգին, պրկուած աշխատանքով պիտի արդիւնաւորէին օրըստօրէ իրենց թափած քրտինքը:

Պէյրուսի վարչութիւնը, ի խնդիր հաւաքավայրի մը, մասնաւոր կիրակի օրերու գործածութեան համար, կը դիմէ Ազգ. վարժարանի հոգաբարձութեան, անկէ խնդրելով որ իրենց տրամադրուի վարժարանի սենեակներէն մէկը: Հոգաբարձութիւնը ընթացք տալով, Ապրիլ 14ին, կը գումարուի ընդհանուր անդամական ժողով, ուր կ'ընտրուի վարչութիւն, որուն կը մասնակցին Արամ Քիւրտեան, Կարապետ Պատու-

հասեան, Օննիկ Պէօճէքեան, Օննիկ Փիլիկեան, Շաւարշ Պէքերեան, Ա. Ղազէրեան եւ Վահան Ղազէրեան:

Նորընտիր վարչութիւնը իր առաջին նիստին, 24 Ապրիլ 1929ին, ընդառաջելով Ս. Նշան Ազգ. վարժարանի դիմումին՝ իրենց սարքելիք «դաշտահանդէսին Հ.Մ.Ը.Մ.ի անդամներուն կարգապահութեան հսկելու», գործերու լայն բաժանումով մը, երեք յանձնախումբեր կը կազմէ: «Դաշտային գործերը աւելի լաւ վիճակի մէջ դնելու համար նկատի կ'առնուին» Ա. Ղազարեան, Քեայեայեան, Թաղէոս Գարագալբազեան, Ս. Միսաւետիքեան, Ղազարոս Գասապեան, Ե. Երամեան, Պ. Շահինեան, Ժ. Սերոբեան: Իսկ «Վարչութիւնս նկատի առնելով սկառուտներու անկազմակերպ վիճակը որոշեց չորս հոգինոց յանձնախումբ մը կազմելով աւելի լայն հիմերու վրայ դնել այս գործը»: Այս յանձնախումբին մաս կը կազմեն Գ. Գարայեան, Հ. Դաւիթեան, Կ. Աւագեան: Նաեւ՝ «որոշուեցաւ ողիմպիական խաղերու համար չորս հոգինոց յանձնախումբ մը.՝ Զ. Սարեան, Ա. Յակոբեան, Յ. Շահինեան, Օ. Փիլիկեան»:

Սկառուտապետ Յ. Սերոբեանի դիմումին, վարչութիւնը պարտականութիւն կու տայ Օ. Փիլիկեանին գնելու փողկապ, գլխարկ եւ արշաւներու համար վրան մը: Իսկ անոնց առողջապահական նիւթերու շուրջ դասախօսելու համար պարտականութիւն կը տրուի տոքթ. Յակոբ Գասապեանին, հուսկ ապա ընթացք կը տրուի իրենց սկառուտական արշաւ մը կազմակերպելու առաջարկին:

Թրիփոլիի մասնաճիւղը իր հիմնադրութենէն անմիջապէս վերջ կ'ունենայ իր ակումբը, իր ակումբին մէջ գրադարանը, որուն ճոխացման համար կը ներկայացնէ «Պաղտասար Աղբար»ը, եւ կը դիմէ «Յուսարեբ», «Արեւ», «Երկունք», «Բուժանք», «Հայրենիք», «Ապագայ», «Ասպարէզ» թերթերու խմբագրութիւններուն՝ իրենց օժանդակելու համար: Օգոստոս 18ին լոյս կ'ընծայէ «Վիտոյ» խմորատիպ պատանեկան շաբաթաթերթը: Առաջին առիթով իսկ, Թրիփոլի կը բաժանորդագրուի «Նոր Սերունդ» մարզական թերթին, զոր այդ



օրերուն մեր բոլոր մասնաճիւղերն ալ կը ստանային քանի մը օրինակներով:

Իր սեփական ակումբին մէջ, Թրիփոլիի մասնաճիւղը կը գումարէ անդամական իր երկրորդ ընդհանուր ժողովը, 2 Յունիս 1929ին, ընտրելու նոր վարչութիւն: Կ'ընտրուին՝ Յովսէփ Առաքելեան, Միսաք Լիպարիտեան, Վահան Գալայճեան, Իսահակ Գարաճեան եւ Արիս Աթմաճեան:

Հ.Մ.Ը.Մ.ը ամէնուրեք մարզական կեանքի դերին մէջ է, հանրային բոլոր ձեռնարկներուն մասնակից: Թրիփոլիի թաղական խորհուրդը կը խնդրէ վարչութենէն, որ «միութեանս մարզիկ անդամները ստանձնեն Ազգ. վարժարանի ամապերջի հանդէսին հսկողութիւնը»: Ասոր համար ալ ամէն Կիրակի անընդհատ տեղի ունեցող Ֆութպոլի խաղը կը յետաձգուի: Ֆութպոլիստները դաշտ կ'իջնեն առանց խաղին պահանջած տարազին, ուստի «ատենապետին Պէյրութ այցելելու առիթէն օգտուելով, վարչութիւնս որոշեց բերել տալ Ֆութպոլիստներու յատուկ ֆանելաներ» եւ սակայն, «դժբախտաբար նիւթականը անբաւարար ըլլալով չկրցաւ բերել» (Ատենագրութիւն 30 Յունիսի եւ 28 Յուլիսի նիստերուն): Այսուհանդերձ, «Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփոլիի վարչութիւնը կը գործէ անընդհատ: Անդամներուն թիւը արդէն 25ի բարձրացած է: Մեծ խանդավառութիւն եւ հետաքրքրութիւն ստեղծած է պատանիներուն մէջ: Ամէն Կիրակի տեղի կ'ունենան իրենց խաղերը» («Ազդակ», 10 Յուլիս 1929):

Չահլէն նմանապէս աշխոյժ է: Իր նեղ շրջապիտէն դուրս գալով, յանդգնութիւնը կ'ունենայ այցելելու Դամասկոս, ընդառաջելով իրեն եղած դիմումին: Յուլիս 7ին, խումբը կը հասնի Դամասկոս՝ «իր քոյր մասնաճիւղի Ֆութպոլի խումբին հետ մրցում մը կատարելու»:

«Խաղը շատ կանոնաւոր ու հետաքրքրական էր. վերջացաւ Դամասկոսի յաղթութեամբ: Նկատելի է որ շատ մը հայրենակիցներ գուրգուրոտ վերաբերմունք մը ունին Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ» («Ազդակ», 13 Յուլիս 1929):

Պէյրութի մասնաճիւղի վարչութիւնը գեղեցիկ գաղափարը կ'ունենայ 1929 Յուլիս



28ին արշաւ մը կազմակերպելու դէպի Ալէյ. «Միութեան գործօն թէ համակիր անդամներ, կը հրաւիրենք ձեզ, բոլորդ ալ, մասնակցելու այս հաճելի պտոյտին»:

«Յիշեցէք թէ կեանքի լաւագոյն յիշատակները կը կազմըւին ընկերային գուարթ շրջանակներու մէջ եւ նախընտրեցէք բարձունքներու ջինջ օղն ու չարքաչ կեանքը քաղաքի թաղերուն հեղձուցիչ ու ձանձրալի կեանքէն» («Ազդակ», 23 Մայիս):

Այս «Հաճոյալի» պտոյտը տեղի կ'ունենայ: «Շարաթ կէս գիշերին էր, 32 հոգիէ բաղկացած խումբը ճամբայ ելաւ դէպի Ալէյ: --«Իր ամբողջ փայլով, լիալուսինը ժպտադէմ կը դիտէր այդ աշխոյժ խումբը, որ փողի վրայ «Յառաջ նահատակ»ի գոռ խաղերով յառաջ կը շարժէր»:

«Որքա՛ն հաճելի էր քալել յուսնկայ գիշերուան այդ գովութեանը մէջ- ճամբուն ամբողջ տեւողութեանը երգերու, գուարթախօսութիւններու, ծիծաղներու շարք մըն էր... Արեւելքը ճերմկած էր երբ Ալէյ, մօտ տասնհինգ հազար մեթր ճամբայ, կը հասնինք: Հոն քիչ մը դադարէ ետք, կը յառաջանանք բանակավայր՝ Այն Պըխշիթէյ»:

«Քսան վայրկեանի քալուած մը ու ահա յաղթական մուտք կը գործենք գիւղ: Փողերու ձայներէն արթնցած գիւղացիները պատուհանները ելած, քնաթաթախ աչքերով, ապշահար, կը դիտեն այս օտարական այցելուները- երիտասարդներու շարան մը սկառուտական համագգեստներով, դրօշակով, փողերով, հեռադիտակ ու յուսանկարչական գործիքներով: Կը զարմանան, որովհետեւ գուցէ չեն կրնար հաշտեցնել «Հայ գաղթական»ի իրենց գաղափարը այս նոր շարժումին, նոր երեւոյթին հետ...»:

«Օրուան կարճ պտոյտներն ու հաճոյքները կը սկսին ծայր տալ, Լիբանանի դրախտային մէկ գեղեցիկ անկիւնը, ջուրի ակին, մայրիներու ներքեւ, ազատ բնութեան ծոցը («Ազդակ», 3 Օգոստոս, 1929):

«Ազդակ» 3 Օգոստոս 1929ի համարով, «Մարմնակրթութեան»ը խորագրած խմբագրականին մէջ կը գրէ: «Գաղութներու ազգային կեանքին մէջ ամենափայլուն եւ գովելի շարժումը, մեր նոր սերունդի մարմնակրթութեան հանդէպ ունեցած սէրն է, որ ամէն տեղ ծնունդ կու տայ կազմակերպութիւններուն»:

«Մեր նորահաստատ գաղութներու մէջ, ուր հայութիւնը նիւթական ու ֆիզիքական դժուարին պայմաններու մէջ կը գտնուի, մարմնակրթութեան հանդէպ սկսող այս նոր շարժումը ունի բարոյական նշանակութիւն մը: Երբ ամբողջ քաղաքակիրթ երկիրներու մէջ մարմնակրթութիւնը դարձած է հաւատք եւ հասած է կատարելութեան, նման կազմակերպութիւն մը ի հարկէ անհրաժեշտ եւ ամենակենսական ձեռնարկն է՝ ծառայելու հայկական քարոզչութեան»:

«Մարմնամարզական գանազան ճիւղերու յաջող խաղարկութիւններն ու ցուցադրութիւնները եւ անոնց տեղացի եւ օտար խումբերու հետ կատարելիք մրցումները պիտի ծառայէին աւելի ծանօթացնելու եւ բարձրացնելու հայ հաւաքականութեան վարկը յաշտ օտարներու»:

(Շար. 27)



ԵՌԱԳՈՅՆԻՆ

Աչքերով քեզ կը հետապնդենք:
Կը սպասենք...:
Կը սպասենք, որ քեզ բարձրացնեն
զգուշութեամբ,
Բայց՝ արագ:

Թող, որ աշխարհը վկայ դառնայ.
Քեզ պիտի բարձրացնենք առ յաւիտ
Մեր սրտերուն, մեր երակներուն
Ու մեր օձախներուն մէջ:
Մեր բազուկներով, միասնաբար
Պիտի բարձրացնենք
Յո՛ւն, ուր որ ենք:
Ու պիտի հանենք մինչեւ կապոյտ կամար:
Եւ հոնկէ տե՛ս քու զաւակներդ.
Քեզ պիտի օրհներգեն:
Իրենց յաղթական ձայնով պարիսպ
կանգնած

Քեզ պիտի պահեն, հպարտ ու պանծալի:
Իրենց քաղցր մայրենիով սիրտդ օրօրեն
Ու դարաւոր սպիներդ բալասանով օժեն:

Ժամն է բարձրանալու:
Ժամն է փառքի շողեր արծակելու
Ամէն ժամ եւ ամէն տեղ:
Թող, որ աշխարհը իմանայ,
Դատարկ հայ թագաւորին գահին վրայ
Այժմ դուն կը բազմիս թելերով
Եւ կը բարձրացնես մեզ վեր, աւելի~ վեր:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ՇԵՐՆԷՁԵԱՆ
Դպրեվանք, Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան

ՅԱՄԱՌՕՐԷՆ, ՅԱՄՐՕՐԷՆ ... ՈՍՏՈՍՏԵԼՈՎ



Գրիգորիս Պողարեան ՊԵՅՐՈՒԹ

Ծնալ արհաւիրքի ու տառապանքի օրերուն, յամառ պայքար մղելով տիրող խաւարամբ-տուլթեան, կասկածամտութեան, նիւթական անփառունակ պայմաններու եւ քաղաքա-կան կաշկանդումներու դէմ: Յամրօրէն, յամառօրէն եւ հետեւողական ձեւով ձեռք երկարեց կարօտ-եալին, ներգրաւեց պատանին ու երիտասարդը, յղկեց մտքերը եւ լարեց մկանները: Նորաստեղծ Հ.Մ.Ը.Մ.ն էր այդ, որ ոս-տումներով տարածուեցաւ Պոլիսէն մինչեւ գաւառները:

Վրայ հասան տարագրութեան դառն օրերը, եւ այս ան-գամ ոստումները գայն հասցուցին նախ Միջին Արեւելքի մօ-տակայ երկիրները, ու ապա՝ ովկիանոսներէն անդին, նոյնիսկ ազեկագին ընօրրանը: Հ.Մ.Ը.Մ. ամէնուրեք կազմակերպեց մասնաճիւղեր եւ յամառ աշխատանքով յառաջացուց մարզա-կան թէ սկառտական միաւորներ, աւիւն ու աւիչ ներմուծեց հայկական գաղութներուն եւ սատարեց հայակերտման ու հայապահպանման հաւաքական մեր ճիգերուն:

Ու երբ եկաւ պահը թափ տալու պահանջատիրութեան, ըլ-լայ ան առնչուած Յեղասպանութեան ճանաչման, հայրենիքի վերանկախութեան թէ Արցախի ինքնորոշման, Հ.Մ.-Ը.Մ.ականներ անհատաբար թէ խմբովին դարձեալ պատնէշի վրայ եղան, յամառօրէն կառչած այն գաղափարախօսու-թեան, որմով սնած էին: Յամառօրէն եւ յամրօրէն նեցուկ եղան հայրենի ու արցախցի իրենց եղբայրներու պայքարին՝ ի պահանջեալ հարկին չզլանալով իրենց հանգիստը ու նոյնիսկ՝ կեանքը:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ. կը թեւակոխէ ոստումներու նոր շրջան մը, որ կ'ենթադրէ ոստում դէպի նորաստեղծ Սփիւռքի տար-բեր գաղութները, ուր միայն յամառ ու յարատեւ աշխատան-քով կարելի պիտի ըլլայ կազմակերպական ճիգերը արդիւնա-ւորել: Վերոյիշեալ ոստումներէն անդին Հ.Մ.Ը.Մ. իր 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին տուաւ պատմա-կան որոշում մը, ըստ որուն՝ Հ.Մ.Ը.Մ. հսկայական ոստում մը պիտի կատարէ այս անգամ ո՛չ ամուր ցամաքի, ո՛չ ալ ջրա-տարածքներու վրայով, այլ՝ դէպի ապագայ: Քայլ մը, որ Հ.Մ.Ը.Մ.ի ցարդ ունեցած աշխատանքային պատմութեան հե-տեւողականութեամբ կը պարփակէ ոստում, յամառ կամք ու հաստատակամութիւն, բայց անգամուան մը համար յամր յառաջընթացը կը փոխարինուի գէթ ոմանց պարագային գեր-ձայնային արագութեան համագոր քայլով: Սակայն հոս գար-մանայի ոչինչ կայ: Այն Հ.Մ.Ը.Մ.ը, որ ամբողջ ինը տասնամ-եակ յամառօրէն եւ յամրօրէն, ամբողջական հաւատքով եւ նուիրումով սերունդներու հայաբարոյ կերտումին բերած է իր գնահատելի նպաստը, այսօր պատրաստ է ազգապահպան-ման աշխատանքին ո՛չ միայն կատարելու իր սովորական ներդրումը, այլ՝ կանխամտածուած եւ հեռատես նախապատ-րաստութեամբ դիմագրաւելու Չըրզ դարու բոլոր մարտահր-րաւէրները: Ահա այս յստակ համոզումներով, յամառ աշխա-տանքի աննկուն կամքով եւ պայծառ ապագայի իրականաց-ման տեսիլքով է որ գործի կոչուած է իւրաքանչիւր Հ.Մ.-Ը.Մ.ական յաջորդ քառամեակին, նորընտիր կեդրոնական Վարչութեան ցուցմունքներով եւ անոր հովանիին տակ:

Բարի երթ եւ յաջողութիւն բոլորիս:


«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին որոշումով, վերահաստատուած է «Մար-զիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 300 տուար եւ աւելի կը նուիրեն թերթին բարգաւաճման ծրագիրներուն:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԼԻԲԱՆԱՆԷՆ Տէր եւ տիկին Գրիգորիս Պողարեան, Նուպար Սոֆեան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐԷՆ Պետիկ Տէր Վարդանեան:



ՄԵՐԺԻՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Գեորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Ուրուկուէյցի հայազգի մարզիչ Սերժիօ Մարգարեան ծանօթ անուն մըն է միջազգային ֆուտպոլի աշխարհին մէջ: Ճիշդ է, որ ան անուանի ակումբներու մարզիչ չէ եղած, սակայն մարզումի իր ասպարէզին ընթացքին միշտ ալ յաջողութիւններ արձանագրած է, գանազան ակումբներու հետ:

Ո՞վ է Սերժիօ Մարգարեան:

Մարգարեան ծնած է Ուրուկուէյ, 1944ին: Ֆուտպոլ խաղացած է մինչեւ 17 տարեկան: Ապա, ձգելով մարզաշխարհը, շարունակած է ուսումը եւ գալիս աւարտել է ետք՝ աշխատած է Ուրուկուէյի քարիւղի ընկերութիւններէն մէկուն մէջ: 1974ին, Գերմանիոյ մէջ տեղի ունեցած Մոնտիալին, երբ Ուրուկուէյի հաւաքականը պարտութիւն կը կրէ Հոլանտայէն, Մարգարեան կ'որոշէ նետուիլ մարզումի ասպարէզ: Առաջին տասնամեակը բաւական դժուար տարիներ կ'ըլլան անոր համար: Ան նոյնիսկ կը քննադատուի իր գործընկերներուն կողմէ՝ այս քայլին դիմած ըլլալուն համար: Նիւթապէս ալ ան անձուկ շրջան մը կ'անցընէ: Սակայն, հետագային, ան կը հասնի յաջողութեան եւ կը տիրանայ «էլ Մաֆօ» տիտղոսին:

Մարգարեանի արհեստավարժ մարզիչի ասպարէզը ընթացք կ'առնէ 1983ին: Առաջին անգամ ան կը մարզէ Փարակուէյի Օլիմպիա Ասունսիօնը: 1989ին կը ստանձնէ Փարակուէյի Սոլ Տէ Ամերիքա խումբին մարզումը, իսկ 1990-1991 տարեշրջանին կը մարզէ նոյն երկրի Սերրօ Փորթենիօ խումբը: 1992ին կը նշանակուի Փարակուէյի 23 տարեկանէն վար խա-

ղացողներու ազգային խումբի մարզիչ: Ապա, յաջորդաբար, կը մարզէ Իւնիվերսիթարիօ Տէ Տեփորթէսը (Փերու), Սփորթինկ Քրիսթալը (Փերու) եւ Լոնիքոսը (Յունաստան): Նշեալ ակումբներուն հետ Մարգարեան կ'արձանագրէ բաւական յաջողութիւններ: Ճիշդ է, որ ան տիտղոսներ չ'ապահովեր անոնց, սակայն խումբերը իրենց երկիրներու ախոյեանութիւններուն կը գրաւեն առաջնակարգ դիրքեր:

1999-2002 տարիներուն Մարգարեան կը նշանակուի Փարակուէյի ազգային խումբի մարզիչ: Կ'արձանագրէ բաւական լաւ արդիւնքներ: Սակայն, գտումի խաղերու վերջին երկու մրցումներուն պարտութիւն կրելով, կը փոխարինուի իտալացի Սեզարէ Մալտինիով:

Մարգարեան կը վերադառնայ Յունաստան եւ կը ստանձնէ Փանաթինայքոսի մարզումը: Ան յաջողութիւն կ'արձանագրէ Եու-էֆ-Ա-ի մրցումներուն եւ խումբը առաջին անգամ ըլլալով կը հասնի քառորդ աւարտական: Ան կը մարզէ նաեւ յունական Իրաքլիսը:

Մարգարեան դարձեալ կը վերադառնայ Փարակուէյ եւ կը մարզէ Լիպերթատը: Երկու տարի ետք կը ստանձնէ Մեքսիքայի Քրուզ Ազուլի մարզումը:

2007ին, կարճ ժամանակի մը համար, Մարգարեան կը նշանակուի Քոսթա Ռիքայի ազգային խումբի մարզիչ: Քոսթա Ռիքայէն կը մեկնի Չիլի եւ տարի մը կը մարզէ Իւնիվերսիտատ Տէ Չիլին, որուն հետ կը շահի Չիլիի Թոմէօ Ափորթերա տիտղոսը:

Յուլիս 2010ին կը նշանակուի Փերուի ազգային խումբի մարզիչ: Անոր պարտականութիւն կը տրուի խումբը հասցնել Քոփա Ամերիքայի եւ Մոնտիալի աւարտական հանգրուաններ: Քոփա Ամերիքայի մրցումներուն Փերու ո՛չ միայն դրական արդիւնքներ կ'արձանագրէ, այլեւ՝ համոզիչ խաղարկութիւն կը ցուցաբերէ: Ան կը գրաւէ պատուաբեր երրորդ դիրքը: 1975էն ի վեր այս արդիւնքը Փերուի լաւագոյն արդիւնքն էր: Հիմա արդէն խումբը կը պատրաստուի Մոնտիալի գտումի մրցումներուն, որոնք ընթացք առած են արդէն:

Մարզումի իր ասպարէզին ընթացքին, Մարգարեան չորս անգամ շահած է Փարակուէյի ախոյեանութիւնը, իսկ երկու անգամ ալ՝ Փերուի ախոյեանութիւնը: Կարգ մը փոքր մրցաշարքերու ան յաղթական դուրս եկած է իր ակումբներուն հետ:

Սերժիօ Մարգարեան ծանօթ անուն մըն է ընդհանրապէս ֆուտպոլի եւ մասնաւորապէս հարաւային ամերիկեան ֆուտպոլի աշխարհին մէջ: Ան արդէն կը նկատուի փնտռուած մարզիչ մը: Այսօր, ան Հարաւային Ամերիկայի երրորդ բարձր վարձատրուող մարզիչն է:



ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՒՆԴԸ ԱՐԱԳԱԾԻ ԳԱԳԱԹԻՆ

Լիլիթ Լալայեան
ԵՐԵՎԱՆ



Իտի տօնենք անկախութեան 20ամեակը: Հանրապետութիւնով մէկ աշխոյժ եռուզեռ է, կատարում են նախապատրաստական աշխատանքներ: Եւ վերջապէս մէկ տասնեակ տարուց աւելի ընդմիջումից յետոյ մենք նորից պիտի ներկայ գտուէինք հօր զօրահանդէսին, ուր կը ցուցադրուէր մեր մարտունակ բանակի ողջ ուժը, զրահատեխնիկան, զէնք-զինամթերքն ու մարտուժը: Խենթանալ կարելի է... Սակայն մենք՝ սկաուտներս, որոշեցինք այլ կերպ նշել մեր անկախութիւնը՝ Եռագոյնը կոթողելով Հայաստանի ամենաբարձր լեռան՝ Արագածի գագաթին: Մօտ 250 հո-

գով պիտի մեկնէինք Բիւրականի բանակավայր, որտեղից անկախութեան օրը չբացուած՝ պէտք է արշաւէինք Արագածի գագաթ: Հասնելով սիրելի բանակավայր՝ սիրտս լցուեց ջերմ կարօտով, ահա Արարատ լեռան տեսքով կայմը, ուր քանի-քանի ժամեր ենք անցկացրել կիզիչ արեւի ներքոյ, ահա վրանները, ուր ծանրաբեռնուած օրակարգից յետոյ յոգնած գետնի վրայ հանգչելը բաղձալի երազանք էր թւում, ահա ամէն մի անկիւն, ուր յիշեցնում էր բանակման քաղցր ու անմոռանալի օրերը, իսկ գաղափարակից ու ինքնութեանս մի մաս

կազմող սկաուտ հարազատ քոյրերի եւ եղբայրների ներկայութիւնը արդէն լրացնում էր այդ յուզիչ տեսարանը: Տեղաւորուելով վրաններում եւ տնակներում՝ մի քանի կազմակերպչական յանձնարարականներ կատարելուց եւ ընթրելուց յետոյ, պատրաստուեցինք խարուկահանդէսին: Բրգաձեւ խարոյկի շուրջ հաւաքուած երիտասարդներս երգում, պարում ու ուրախանում էինք, մեր ոգեւորութեան չափ ու սահման չկար, խարոյկի այրող բոցը, միանալով մեր հոգու բոցին, հրդեհում էր մեր սրտերը հայրենիքի անսահման սիրով ու նուիրումով, ազգային մի երգին յաջորդում էր միւսը, ա՛խ որքան կեանք ու ոգի կար այդ երգերում: Իսկ ճիշդ կէս գիշերին, մենք դիմաւորեցինք անկախութիւնը Հ.Հ. օրհնեցող:





Խենթ երգ ու պարերը շարունակուեցին մինչև կրակմար: Գրեթէ ոչ ոք չէր կարողանում քնել կրակմարից յետոյ: Գիշերային խաւարում լսում էին «Թիկունքդ լայն»ի եղանակը, միւս կողմից՝ «Չէ, չէ գուրէ» կանչի արձագանգները, իսկ ինչ որ մի տեղ քոյր Արագը բամբերգում էր՝ «Սէրս գաղտնի թող մնայ» երգը: Բոլորս ոգեւորուած էինք ու անհամբեր: չէ՞ որ վաղը խորհրդանշական էր լինելու: Ամէնուրեք թեւածում էր մի միտք. «Արագած, քո զաւակները վաղը գալիս են քեզ մօտ... գալիս են քեզ տեսութեան ու մասնակից դարձնելու մեր անկախութեան տօնին, երգ ու պարին...»:

Արեւի առաջին շողերը իջան բանակավայրի վրայ՝ աւետելով անկախութեան օրուայ սկիզբը: Ամէնուրեք լսում էին շնորհաւորանքի խօսքեր: Մինչ այդ կիսաքուն, բայց ոգեւորուած սկառուտ քոյրերն ու եղբայրները արդէն պատրաստ էին արշաւելու Արագածի գագաթ՝ ռոպէ առաջ գագաթին երգելու եւ պարելու՝ հայեացքը ուղղած բաղձալի Արարատին: Արշաւականները մէկ ժամից արդէն գտնուում էին Արագածի լանջին՝ լծի մօտ:

Ահա մեր առաջ բազմել էր Արագած լեռը իր ողջ շքեղութեամբ ու հզօրութեամբ, այն ամբողջովին պատուել էր ձիւնով, այեհեր գագաթը բնաւ չէր երեւում մշուշի պատճառով, այդ խորհրդ-

դաւոր տեսարանից պարզ էր դառնում, որ մեզ սպասում էր տառապալից ու դժուարին ճանապարհ: Բարձրանալով 100 մետր՝ մենք ամբողջութեամբ խրուեցինք ձեան մէջ, առաջ շարժուելով՝ աւելի ու աւելի էինք զգում սաստիկ քամու պաղ ապտակները, օդը դառնում էր սակաւ, շնչելը՝ դժուարին, իսկ քայլերը՝ ծանր: Անցնելով բաւականին երկար ճանապարհ՝ մենք յայտնուեցինք անյայտ մառախուղի մէջ, աննկարագրելի տեսարան էր, ամէնուրեք ձիւն, ձեան հաստ շերտի ներքոյ խորամանկօրէն թաքնուած քարի բեկորներ, որոնք սպասում էին մի անփոյթ շարժումի՝ իսկոյն ցած նետելու մեզ ժայռից: Թւում էր այս ճանապարհը վերջ չունի, հանդստի համար դադարները աւելի պարբերական դարձան, իսկ օդի ճնշման տատանումները աւելի զգացնել էին տալիս: Երբեմն թւում էր, որ պաղ օդը խեղդում ու ուժասպառ էր անում, սակայն անընդհատ սայթաքումները, ոտքերի կապտուկները ու լարուած մկանների ցաւերը մոռացում էին, երբ գիտակցում էինք, որ վերելում բաղձալի գագաթն է, վերելում է իսկական ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ու ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Մտքիս թելով անցնում էին Արցախի Ֆիտայիների սխրանքները ու նրանց տառապալից ճանապարհը, ախր իրենց մաքառման շնորհիւ է, որ այսօր մենք

բոլորս կանք, խօսում ենք հայերէն, ապրում ենք ազգային գիտակից կեանքով: Գիտակցելով այդ ամէնը՝ թւում է, որ մենք էլ մի շատ կարեւոր բան էինք անում, յաղթահարելով խոչընդոտներ, հասնելու համար բաղձալի նպատակին:

Անցել էր 3 ժամ, մնացել էր վերջին 100 մետրը: Յանկարծ ձիւն տեղաց, կարծես Արագածը մեզ ողջոյնի նշաններ էր տալիս, սառնամանիքը արդէն թափանցել էր ցոսկորներ, չէինք զգում ցրտից փայտացած մեր ոտքերը, քամուց այտուցուել էին բոլորիս դէմքերն ու ձեռքերը, ամէն քայլ մեզ տրուում էր դժուարութեամբ: Ծանր հեւալով, գրեթէ ուժասպառ՝ մենք կրճատում էինք յաւերժութիւն թուացող մեր ճամբան... Եւ ահա ԳԱԳԱԹԸ... մենք վերջապէս հասանք...

Ահա հայոց Եռագոյնը կոթողուեց Արագածի գագաթին, ոգեւորութեանը միախառնուեցին Եարխուշտայի առաջին հնչիւնները, մենք արդէն չէինք զգում յոգնածութիւն կամ սառնամանիք, մեզ պարուրել էր մի վեհ զգացում, մենք տրուել էինք երգին ու երաժշտութեանը: Արագածի այեհեր գագաթը ցնցում էր մեր խրոխտ պարի տրոփիւններից, իսկ ազգային երգի բամբարձագանգները ասես հասնում էին մինչև ժամանակաւորապէս գերի մեր հօրը՝ Արարատին: Արագածի գագաթին մենք ուխտեցինք անկախութեան 30ամեակին անկախութեան բերկրանքը հասցնել նաեւ Մեծն Հայաստանի ամենաբարձր լեռան՝ Արարատին: Յնձութեան այդ ռոպէին յանկարծ յիշեցի Սփիւռքում գտնուող իմ ընկերներին, վստահ եմ, իրենց համար նոյնպէս երազ է Արագածին Եռագոյն կոթողելը, անխօս, որ մենք իրենցմով ոգեւորուած, եղբայրական ու ընկերական եռանդը մեր մէջ պահելով, հասանք Արագածի գագաթ, մեզ հետ կրելով իրենցից մի մասնիկ...

Ահա եւ անկախութեան սերունդը Արագածի գագաթին: Կեցցէ Հայաստանը, հայութիւնը եւ արեամբ վաստակած անկախութիւնը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ 10ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Լոռի Պարագեան ԱԹԵՆՔ

ՀՄԸՄ-ի Յունաստանի Շրջանային Սկաուտ Խորհուրդին 10րդ բանակումին փակման հանդիսությունը տեղի ունեցավ ուրախ եւ խանդավառ մթնոլորտի մէջ, ՀՄԸՄ-ականներու, սկաուտներու, ծնողներու եւ ՀՄԸՄ-ի վեթերան խմբապետներու ներկայութեամբ:

Տասնօրեայ բանակումին աւարտին կազմակերպուած հանդիսությունը սկսաւ դրօշակի արարողութեամբ, գայլիկներու խոստման եւ արիններու երդման արարողութիւններով: Կատարուեցան նաեւ խմբաւորումներու միջեւ փոխանցման եւ կարգերու պէճի տուչութեան արարողութիւններ:

Հանդիսութեան բացումը կատարեց Շրջանային խմբապետուհի եւ բանակումի ընդհանուր պատասխանատու քոյր Գոհար Ալիանաբեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ բանակումի ընդհանուր ընթացքին:

Յաջորդեց Շրջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեանի խօսքը, որուն մէջ ան նշեց բանակումին կարեւորութիւնը: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նիւթապէս ու բարոյապէս օժանդակեցին բանակումին յաջողութեան համար: Ան մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու Սկաուտ Խորհուրդներու քոյրերուն, որոնք ստանձնած էին օրը հինգ անգամ ճաշ պատրաստելու պարտականութիւնը:



Իր կարգին, ՀՄԸՄ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Խաչատուրեան խօսք առնելով բարի գալուստ մաղթեց ներկաներուն:

Յայտագիրը սկսաւ գայլիկ-արծուիկներու վոհմակի պատրաստած նիւթով, որ հիմնուած էր բանակումի «Թռչի մտքով տուն» նիւթին վրայ: Գայլիկ-արծուիկները ներկայացուցին երեւակայական ճամբորդութիւն մը դէպի հայրենիք, բաղկացած՝ բանաստեղծութիւններէ, մտաւորականներու կենսագրութիւններէ եւ երգերէ:

Արի-արեւոյշներու խումբը այս առիթով ներկայացուց բանակումի կեանքէն գաւեշտներ եւ մարգական բուրգեր:

Հանդիսությունը փակուեցաւ հիւրասիրութեամբ եւ «Ցտեսութեան երգ»ով:

«ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Սարգիս Աճէմեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Սիրան Շիմշիրեան 50 \$



Հ.Մ.Ը.Մ-ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼ-ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Ուրբաթ, 7 Հոկտեմբեր 2011ին, Զալքայի «Ուայթ թաուեր» պանդոկի «Արարատ-Փայաս» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի ակադեմիայի առաջին հունձքի վկայականներու բաշխման հանդիսութիւնը, կընքահայրութեամբ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Յոլակ Թիւթէյեանի, ներկայութեամբ վկայեալ 18 մարզիկներու ծնողներու եւ հրաւիրեալներու:

Հանդիսութեան բացումը կատարեց Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենադպիր քոյր Մարո Թազեան: Բարի գալուստի խօսքէ ետք, քոյրը ըսաւ, որ տքնաջան եւ յարատեւ աշխատանքի մը պտուղն է, որ այսօր կը քաղէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը: Իր կատարած կարեւոր իրագործումէն ետք, Հ.Մ.Ը.Մ. պիտի շարունակէ նոյն ընթացքը յառաջիկայ տարիներուն եւս:

Ապա, քոյր Թազեան ներկայացուց օրուան յայտագիրը՝ ըսելով, որ յաջորդաբար խօսքեր պիտի առնեն Ռուբէն Եփրեմեան (առաջին հունձքի ծնողներու անունով), եղբայրներ Վաչէ Տիրչէֆէնեան (Ֆուտպոլի յանձնախումբին անունով), Յակոբ Քէշիշեան (Շրջանային Վարչութեան անունով), Յակոբ Տէմիրճեան (ակադեմիայի գլխաւոր մարզիչ) եւ օրուան կնքահայրը՝ եղբ. Յոլակ Թիւթէյեան:

Իր խօսքին մէջ, Ռուբէն Եփրեմեան ըսաւ. «Մենք իբրեւ ծնողներ հպարտ ենք մեր զաւակներով, նաեւ՝ մենք մեզ հպարտ կը զգանք, որ մեր զաւակները վստահած ենք պատասխանատու այնպիսի անձերու, որոնք կու գան պատրաստելու ազնիւ Հ.Մ.Ը.Մ-ականներ: Մեր մատղաջ զաւակներու այս յաջողութեան համար թէեւ մեր ժամանակէն տարի մը տրամադրեցինք, սակայն երբ հանդիսութիւնը տեղի ունեցաւ, ամբողջութեամբ մոռցանք տարւան մը մեր յոգնութիւնը»:

Ապա, եղբ. Վաչէ Տիրչէֆէնեան արտասանեց Շրջանային Ֆուտպոլի յանձնախումբին խօսքը՝ մասնաւորապէս ըսելով. «Մօտաւորապէս տարի մը առաջ, երբ բացումը կը կատարուէր Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի «Հայր Պօղոս Արիս» մարզադաշտին, կը հաստատէինք, որ Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ Ֆուտպոլի համակիրներու տարիներու երազն էր, որ կ'իրականանար: Դաշտը ունենայէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ին կը մնար հիմնել Ֆուտպոլի դպրոց մը: Այս անհրաժեշտութենէն մեկնած, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնն ու Ֆուտպոլի յանձնախումբը ճիշմայեցին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի դպրոցը բանայ իր դռները մանուկ ու պատանի տղոց դիմաց, եւ այսօր ունեցանք այս խումբ մը տղաքը, որոնք կոչւած են ըլլալու առաջին հունձքը Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի դպրոցին»:

Ապա, եղբ. Վաչէ Տիրչէֆէնեան արտասանեց Շրջանային Ֆուտպոլի յանձնախումբին խօսքը՝ մասնաւորապէս ըսելով. «Մօտաւորապէս տարի մը առաջ, երբ բացումը կը կատարուէր Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի «Հայր Պօղոս Արիս» մարզադաշտին, կը հաստատէինք, որ Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ Ֆուտպոլի համակիրներու տարիներու երազն էր, որ կ'իրականանար: Դաշտը ունենայէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ին կը մնար հիմնել Ֆուտպոլի դպրոց մը: Այս անհրաժեշտութենէն մեկնած, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնն ու Ֆուտպոլի յանձնախումբը ճիշմայեցին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի դպրոցը բանայ իր դռները մանուկ ու պատանի տղոց դիմաց, եւ այսօր ունեցանք այս խումբ մը տղաքը, որոնք կոչւած են ըլլալու առաջին հունձքը Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտպոլի դպրոցին»:



Շարունակելով, եղբ. Տիչչեֆենեան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլի դպրոցը անցնող տասը ամիսներուն ունեցաւ 320 աշակերտ: Այսօր ան մեզի կը ներկայանայ 18 հոգինոց շրջանաւարտներու իր առաջին հունձքով՝ մեծ յոյսեր ներշնչելով ապագայի նկատմամբ»:

Իր խօսքին աւարտին, եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Ֆուլթայոլի դրպրոցի մնալուն բարերար Ժագ Պարսումեանին, որ միշտ քաջալեր կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ-ի ձեռնարկներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը անգամ մը եւս կու գայ փաստելու, որ անկարելի բան չկայ իրեն համար: Այսօր, բոլորս կենդանի վկան ենք այս իրողութեան եւ հպարտօրէն ու ոգեւորուած կու գանք ըսելու, որ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլը արդէն դրուած է իր ճիշդ հունին մէջ եւ Ֆուլթայոլի մարզին մէջ ընթացք առած է նոր երթ մը, որուն ճառագայթող ու լուսաւոր ապագային առաջին շողերը կը տեսնենք եւ յաղթանակներու ոտնաձայնները կ'առնենք»:

«Հ.Մ.Ը.Մ-ը իր հիմնադրութենէն ի վեր, ամբողջ 93 տարի, մարզականի հետ միատեղ սատարեց հայապահպանման ու ազգապահպանման գործին: Ճիգիբախտ ու բարոյական դաստիարակութեան կողքին, հայ անհատին մէջ սերմանեց ազգային արժէքներու գիտակցութիւն՝ հայ մնալու եւ հայօրէն ապրելու համար,- ըսաւ եղբ. Քէշիշեան եւ շարունակեց,- սիրելի՛ տղաք, Հ.Մ.Ը.Մ-ականի ձեր կեանքին մէջ այս օրը



Եղբ. Յովակ Թիւթէեան:

պիտի ըլլայ անմոռանալի եւ դուք բարձր տրամադրութեամբ, հպարտ ճակատով եւ մարզական բարձր ոգիով պիտի կրէք Հ.Մ.Ը.Մ-ի շապիկը: Քաջ գիտցէք, որ այսօր հաստատ քայլերով մուտք կը գործէք այս միութեան մէջ եւ դուք Հ.Մ.Ը.Մ- կոչուող զօրաւոր շղթային մէկ օղակն էք այլեւս»:

Այս առիթով, եղբ. Քէշիշեան գնահատանքի խօսք ուղղեց Ֆուլթայոլի յանձնախումբին, որ ամիսներ շարունակ հետեւողական կերպով կազմակերպեց Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլի դպրոցը: Ան դրուատեց նաեւ ծնողները, որոնք ճիգ չեն խնայել գոհելու իրենց սուղ ժամանակէն՝ սատարելով Ֆուլթայոլի ակադեմիային եւ անոր խումբերուն վերելքին:

Եղբ. Քէշիշեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Յաջողութիւն կը մաղթենք այսօրուան շրջանաւարտներուն՝ յուսալով, որ անոնք մարզական ոգիի ու եղբայրական միջնորդութիւնի մէջ կը մեծնան՝ ձգտելով տալ լաւագոյնը, ըլլալով տիպար հայեր ու մարզիկներ,

վաղուան Հ.Մ.Ը.Մ-ի փառքին կերտումը շարունակող հերոս տղաք եւ հասնիլ բարձրագոյնին՝ միշտ ի մտի ունենալով Հ.Մ.Ը.Մ-ի անզուգական նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»:

Այնուհետեւ, խօսք առաւ Ֆուլթայոլի ակադեմիայի գլխաւոր մարզիչ եղբ. Յակոբ Տէմիրճեան: Ան ըսաւ. «Տարի մը առաջ, երբ ես եւ եղբ. Սեպուհ Պապիկեանը ստանձնեցինք այս փոքրերուն մարզումը, ունեցանք դժուարութիւններ, սակայն զանոնք յաղթահարելով՝ յաջողեցանք մեր ապագայի կերտման առաջին հիմերը դնել: Մասնակցելով Լիբանանի ակադեմիաներու Ֆուլթայոլի մրցաշարքին՝ յաջողեցանք գրաւել երրորդ դիրքը, ինչ որ կը նկատուի բացառիկ արդիւնք՝ տարի մը առաջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ-ի ակադեմիային համար: Մենք յաջողեցանք, որովհետեւ մարզիչ-մարզիկ-ծնողք կապը եղաւ շատ զօրաւոր, հսկողութեամբ Շրջանային Ֆուլթայոլի յանձնախումբին եւ հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան: Կը մաղթենք, որ այս երթը շարունակուի տարիներ շարունակ»:

Եղբ. Տէմիրճեան իր խօսքէն ետք բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի ակադեմիայի մարզիկներէն մէկը, որ խմբակիցներուն անունով խօսելով ըսաւ. «Կ'ուզենք շնորհակալութիւն յայտնել Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր պատասխանատուներուն եւ մեր մարզիչներուն, որոնք մեծ ջանք թափելով կը փորձեն խումբին յառաջդիմութեան մէջ իրենց կարեւոր դերակատարութիւնը ունենալ: Մենք ալ, մեր կարգին, կու գանք ըսելու, որ ո՛չ մէկ ճիգ պիտի խնայենք արդարացնելու համար տարուող աշխատանքը: Մենք՝ մարզիկներս, Մարքօ Խորշիտեան, Կապրիէլ Շիշոյեան, Նարեկ Տեպօղլեան, Նշան Նորաշխարհեան, Սերժ Տէկիրմէնճեան, Բաֆֆի Խալոյեան, Քրիստ Արթինեան, Հրաչ Ազնիկեան, Կարօ Գալայճեան, Կարօ Շատոյեան, Խաժակ Պարոնեան, Շանթ Գէորգեան, Ճորճ Պարսումեան, Անտրէ Քազգի, Նժդէհ Գարագաւորեան, Վարդան Մամիկոնեան եւ Գրիգոր Ահարոնեան, երախտապարտ ենք ձեր բոլորին, որ մեզի հոս հասցուցիք»:





Հանդիսութեան իր սրտի խօսքը ուղղեց օրուան կնքահայրը՝ եղբ. Յուլակ Թիւթէլեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Իսկապէս հպարտալի երեւոյթ է Հ.Մ.Ը.Մ-ի Ֆութպոլի ակադեմիային ստեղծումը: Բոլորին համար մեծ երազի մը իրականացումն է ան: Բնականաբար, հպարտ են բոլոր պատասխանատուները, կրտսեր մարզիկները, անոնց ծնողներն ու մարզիչները, որոնք ճիգ չխնայեցին այս երազին իրականացման համար: Ութսուն տարի առաջ էր, երբ մուտք կը գործէի Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքէն ներս, իբրեւ կակուղ թաթիկ: Իսկ այժմ կու գամ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆութպոլի ակադեմիայի առաջին հունձքին կնքահայրը ըլլալու: Արտասանուելիք բառերը դժուար թէ կարենան զգացումներս արտայայտել: Իսկապէս, կատարուածը դժուար աշխատանք մըն է, որ կը կարօտի հետեւողականութեան, ճշդապահութեան եւ տքնաջան աշխատանքի»: Ապա, յետա-



Օրուան կնքահայրը հունձքի կրտսերագոյն եւ երիցագոյն մարզիկներուն հետ:



դարձ ակնարկ մը նետելով դէպի անցեալը, եղբ. Թիւթէլեան յիշեց տիպար Ֆութպոլիստ եղբ. Եղիշէ Մանուկեանի օրինակը: «Եղբ. Եղիշէն երեք գործ աշխատելով կը վաստկէր 125 լիբ. ոսկի, յայտնեց եղբ. Թիւթէլեան-, եւ օրին մէկը իրեն առաջարկ ներկայացուցեցաւ օտար ակումբի մը միանալու եւ ամսական 250 լիբ. ոսկի շահելու: Եղբ. Եղիշէն սակայն մերժեց առաջարկը, ըսելով թէ ես եւ ակումբս ծախու չենք»: Եղբ. Թիւթէլեան պատանի Ֆութպոլիստներուն

մաղթեց ըլլալ եղբ. Եղիշէին նման Հ.Մ.Ը.Մ-ի անունը բարձր պահողներ՝ տեղական թէ միջազգային մակարդակի վրայ: Այս առիթով, եղբ. Թիւթէլեան ակադեմիայի առաջին հունձքը կոչեց «Եղիշէ Մանուկեան սերունդ», բոլորին մաղթելով նորանոր յաջողութիւններ, յարատեւ վերելք եւ փայլուն ապագայ:

Ապա, եղբ. Թիւթէլեան բեմ հրաւիրեց հունձքի կրտսերագոյն մարզիկը՝ Կապրիէլ Շիշոյեանը եւ երիցագոյն մարզիկը՝ Ժորճ Պարսումեանը, որպէսզի կատարեն մարզիկներու ստուգումը:

Վերջին բաժինով տեղի ունեցաւ մետալներու բաշխում եւ բաժակի յանձնում՝ ձեռամբ եղբայրներ Յակոբ Քէշիշեանի, Յուլակ Թիւթէլեանի եւ Ֆութպոլի յանձնախումբի ատենապետ եղբ. Սազօ Վարժապետեանի:

Յաջորդեց հիւրասիրութիւն եւ կարկանդակի հատում:



ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ...

(Շարունակուած Բ. կողքէն)

եանութիւններու ընթացքին, այժմ անոր զաւակը՝ Դուին կու գայ շարունակելու այդ յաջողութիւններուն ճամբան կարեւոր այլ նուաճումով մը»:

Ապա, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Սելիմ Հաժ Նիքոլա, Միշէլ Տը Շատարեւեան, Անթուան Շարթիէ, Սիմոն Ապի Ռամիա եւ Ֆայսալ Ալամէտտին: Բոլորն ալ իրենց խօսքերուն մէջ դրուատեցին Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը, մեծ գովասանքով արտայայտուեցան Լիբանանի մարզական կեանքին մէջ անոր արձանագրած փայլուն արդիւնքներուն համար եւ ապագայի նորանոր յառաջողութիւններ մաղթեցին անոր:

Խօսք առնողներէն ոմանք շեշտեցին, որ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութիւնը պէտք է կարելին ի գործ դնէ, բարոյական օժանդակութենէ

բացի, նիւթապէս ալ օգտակար դառնալու Արեւմտեան Ասիոյ ախոյեանին, որպէսզի յաջողութիւն արձանագրելու անոր յոյսերը աւելնան:

Այս առիթով ցուցադրուեցաւ տեսերիկ մը՝ քոյր Դուին Մունջօղլեանի իրագործած յաղթանակներուն մասին:

Վերջին բաժինով իր խօսքը արտասանեց քոյր Դուին Մունջօղլեան: Ան ըսաւ. «Բնականաբար, ուրախ եմ այս իրագործումին համար: Յոյսով եմ, որ կ'արդարացնեմ վրաս դրուած յոյսերը եւ բոլոր կարելիութիւններս ի գործ դնելով փայլուն արդիւնք կ'արձանագրեմ Լոնտոնի մէջ՝ բարձր պահելով Լիբանանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի անունները»:

Հանդիսութեան պաշտօնական բաժնին յաջորդեց հիւրասիրութիւն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 20ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ


Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ 29ՐԳ ՄԱՐՁԱՀԱՆԴԵՍԸ

Թղթակից ՊԱՂՏՍՍ

ՀՄԸՄ-ի Պաղտատի մասնաճյուղի շրջանային 29րդ մարզահանդեսը տեղի ունեցավ 13-15 Հոկտեմբեր 2011ին, միութեան մարզադաշտին վրայ, հովանավորութեամբ Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդ Աւագ Արք. Ասատուրեանի, կազմակերպութեամբ Պաղտատի Մեկուսի վարչութեան եւ մասնակցութեամբ Իրաքի հինգ շրջաններէն՝ Պաղտատի, Հաւրէզքի, Պասրայի, Մուսուլի եւ Քէրքուկի մարզիկ-մարզիկուհիներու:

Մարզահանդէսին բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Իրաքի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Մուրատ Մուրատեան եւ Իրաքի երիտասարդական հարցերու նախարարութեան ներկայացուցիչ Մուհամմէտ Հէտի: Բացումը կատարուեցաւ նարեկ Ա. Քհնյ. Իշխանեանի «Տէրունական աղօթք»ով, որմէ ետք ներկաները վայրկեան մը յոտնկայս լուծեամբ յարգեցին բոլոր նահատակներու յիշատակը:

Բացման խօսքը արտասանեց եւ ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճյուղի ատենապետ եղբ. Վահէ Միհրանեան: Յաջորդեց դրօշակի արարողութիւնը: Իրաքի քայլերգով բարձրացաւ երկրին դրօշը: Արարողութիւնը կա-



տարեց սկաուտական երէց խմբակը:

Ապա, մասնաճյուղին շեփորախումբին խորխտ նուագներով դաշտ մուտք գործեցին մարզահանդէսին մասնակից խումբերը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճյուղին սկաուտական խումբերը, Իրաքի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակներով: Այսպէս, իրարու ետեւէ տողանցեցին մարզիկ-մարզիկուհիները, երէց-պարմանուհիները, արի-արենոյշները, գայլիկ-արծուիկները եւ մրջնիկները: Տողանցողները խանդավառեց օրուան հանդիսավար եղբ. Վաղինակ Վահանեան:

Տողանցքէն ետք, մասնաճյուղին խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Պողոս Գպրճիքեան: Ան ներկայացուց մասնաճյուղին 2011ի մարզական եւ սկաուտական յաջողութիւնները:

Գեղարուեստական յայտագիրը պատրաստուած էր մասնաճյուղին Սկաուտական Խորհուրդին կողմէ: Գայլիկ-արծուիկներ եւ մրջնիկներ ներկայացուցին զուարճալի խաղեր եւ





պարեր: Մարզական խումբեր, իրենց կարգին, ներկայացուցին կարգ մը խաղեր՝ վոլիպոլի ցուցադրական մրցում, պարան քաշել եւ այլն:

Այս առիթով կատարուեցաւ յուշանուէրներու տուչութիւն: Մասնաճիւղը երախտագիտական յուշանուէրներով պատուեց մարզահանդէսին մասնակից հիւրերն ու քոյր միութիւնները:

Այնուհետեւ կատարուեցաւ Հայաստանի անկախութեան վերականգնման 20ամեակին նուիրուած սկաուտական շքերթ, առաջնորդութեամբ Հայաստանի եւ տարբեր երկիրներու դրօշներու: Դրօշները կը ներկայացնէին այն երկիրները, ուր հայեր կ'ապրին Սփիւռքի տարածքին: Շքերթը ներկայ ժողովուրդին մօտ ստեղծեց մեծ խանդավառութիւն եւ արժանացաւ բոլուն ծափահարութիւններու:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Աւագ Արք. Մարտիրոսեան, իսկ փակուած կատարուեցաւ Հայաստանի քայլերգով: Ապա, հիւրերուն ի պատիւ տեղի ունեցաւ ընտանեկան հաւաքոյթ՝ մինչեւ երեկոյեան ժամը 12: Հաւաքոյթը եւ հիւրերու երեք օրուան ճաշերը պատրաստեց մասնաճիւղին ժրաջան տիկնանց յանձնախումբը:



ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ...

Մարզահանդէսին երկրորդ օրը, Ուրբաթ, 14 Հոկտեմբերի առաւօտուն, նախքան մրցումներուն սկսիլը, հիւր մարզիկ-մարզիկուհիները այցելեցին Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Կէսօրին, բոլորը հրաւիրուեցան հանդիպումի մը, ուր վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Միհրանեան մարզական խումբերու պատասխանատուներուն ներկայացուց մրցումներուն կանոնները:

Մրցումները ընդգրկեցին եօթը մարզախաղեր՝ պասքեթպոլ (տղաք), ֆութպոլ (տղաք), փինկ-փոնկ (տղաք եւ աղջիկներ), թենիս (տղաք եւ աղջիկներ), պատմինթըն (տղաք եւ աղջիկներ), ճատրակ (տղաք եւ աղջիկներ) եւ վոլիպոլ (տղաք եւ աղջիկներ):

Մրցումներուն նպատակը անպայման մետալներ չահիլ չէր, որքան խումբերը քով-քովի բերել եւ անոնց մօտ հայկական ապրումը եւ Հ.Մ.Ը.Մ.ական մթնոլորտը վառ պահել էր:

Մրցումներու աւարտին, երեկոյեան, տեղի ունեցաւ ընտանեկան հաւաքոյթ, որ օրուան խանդավառութիւնը հասցուց գագաթնակէտին:

... ԵՒ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Մարզահանդէսին երրորդ օրը, Շաբաթ, 15 Հոկտեմբերի առաւօտուն, տեղի ունեցաւ մրցումներու եզրափակումը՝ ֆութպոլի աւարտական խաղով: Ապա, հիւրընկալ մասնաճիւղը կատարեց ախոյեաններու եւ մրցանակակիր մարզիկ-մարզիկուհիներու մետալներու տուչութիւն:

Նոյն օրը, երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզին մէջ կատարուեցաւ ողջերթի պարահանդէս:

Կիրակի, 16 Հոկտեմբերին, քաղցր յիշատակներով եւ դարձեալ հանդիպելու խոստումով, հիւր պատուիրակութիւնները իրենց քաղաքները վերադարձան բարձր տրամադրութիւններով, յաջողութիւն մաղթելով Հ.Մ.Ը.Մ.ին, որ հակառակ երկրի աննպաստ պայմաններուն, կարողացաւ անգամ մը եւս համախմբել գաղութի երիտասարդութիւնը եւ երեք օր շարունակ ազգային առողջ մթնոլորտ ստեղծեց անոր համար:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻԲՆԻՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ 400 ՍԿԱՌԻՏՆԵՐՈՎ

Րաֆֆի Սիլահեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.Ի Հալեպի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի ըՍ-կառուտ. Խորհուրդին կազմակերպութեամբ, Կիրակի, 21 Օգոստոս 2011ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Հալեպի դաշտէն ներս տեղի ունեցաւ սկառուտական դաշտահանդէս մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 400 գայլիկներ, արծուիկներ եւ արի-արենոյշներ:

Տարեկան բանակումները փոխարինող այս դաշտահանդէսին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը, Սուրիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի Հալեպի մասնաճիւղի վար-

չութիւնն ու Սկառուտ. խորհուրդը, միութիւններու եւ Ազգային վարժարաններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մեծ թիւով ծնողներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

«Շաւարշ Քրիսեան» արի եւ արենոյշ միաւորներու բացման պատկերով սկիզբ առաւ դաշտահանդէսը: Քոյրերն ու եղբայրները բեմական պատկերով ներկայացուցին Սուրիոյ ժողովուրդին համերաշխ եւ միասնակամ կեանքը: Դաշտին մէջ գետեղուած կայմին վրայ ծածանեցաւ Սուրիոյ դրօշը եւ երկրին քայլերգը հնչելով հանդիսութիւնը բացուած յայտարարուեցաւ:

Հայերէն լեզուով բացման խօսքը արտասանեց Հալեպի մասնաճիւղի խմբապետ եղբ. Րաֆֆի Սիլահեան: Եղբայրը իր խօսքին մէջ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.Ի նպատակը հիմնուած օրէն եղաւ հայ պատանին պատրաստել քաղաքացիական, նկարագրային եւ ֆիզիքական տոկոնութեան բարձր մակարդա-

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

**Saberatours
Sevan Voyages**

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VCKEN 2005 PARIS

11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	



կով, ինչպէս նաեւ պատրաստել առողջ եւ չարքաշ անհատներ՝ զօրացնելով անոնց մտային կարողութիւնները: Հ.Մ.Ը.Մ-ը եղաւ դպրոց եւ փոխանցեց ազգային դաստիարակութիւն: Եղաւ ակումբ, եւ սորվեցուց ազգ ու հայրենիք սիրելու անհրաժեշտութիւնը»: Արաբերէնով բացման խօսքը ներկայացուց մասնաճիւղի խմբապետի օգնական եղբ. Յովիկ Հապէշեան: Եղբայրը Հ.Մ.Ը.Մ-ի անունով երախտագիտութեան եւ գորակցութեան խօսք ուղղեց Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատին, որ միշտ եղած է մանուկներուն եւ երիտասարդներուն հետ:

Ապա, Հալէպի մասնաճիւղի բոլոր միաւորներու քոյրերն ու եղբայրները ներկայացուցին գեղարուեստական կոկիկ եւ գեղեցիկ յայտագիր մը, ուր իւրաքանչիւրը դրսեւորեց իր ձիրքն ու շնորհը, փաստելով որ հայը, եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ականը, միշտ կարողացած է յաղթահարել բոլոր դժուար պայմանները: Միաւորները յաջորդաբար ներկայացուցին հայկական, արաբական եւ օտար պարեր, չափական եւ գաւազանով մարզանքներ, բուրգ եւ գաւեշտ:

Յայտագիրը ընդգրկեց նաեւ Նորընծայի եւ Բ. կարգի վկայականաց բաշխում, ինչպէս նաեւ Փոխ Առաջնորդի եւ Առաջնորդի աստիճանատուչութիւն:

Հանդիսութեան աւարտին, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան: Եղբայրը իր խօսքին մէջ բարձր գնահատեց դաշտահանդէսին պատրաստութիւնը եւ այս առիթով ըսաւ. «Մեր սկաուտները այս դաշտահանդէսին միջոցով մեզի փոխանցեցին սկաուտական բանակավայրի միջնորդութեան մեր մէջ արձանագրելով յիշատակելի եւ անմոռանալի վայրկեաններ»: Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան անդրադառնալով, եղբ. Քէօշկէրեան ըսաւ, թէ սկաուտութեան միջոցով նոր սերունդին մէջ կը զարգանան հաւատքը ազգասիրութիւնը եւ հայրենասիրութիւնը ու անոնց մէջ կը սերմանուի համագործակցութեան եւ ծառայութեան ոգին:

Աւարտին, «Շաւարշ Քրիսեան» գայլիկ եւ արծուիկ միաւորները ներկայացուցին փակման պատկեր: Քոյրերն ու եղբայրները եռագոյն փուչիկներով եւ ժապաւէններով յաւելեալ ճոխութիւն եւ խանդավառութիւն ստեղծեցին դաշտէն ներս:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

«ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՀԱԷՊԻ ՄԷՋ

Րաֆֆի Սիւլահեան
ՀԱԼԷՊ

«Հայ մանուկի տարուան» առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան եւ ըՍկաուտ. Խորհուրդին հովանաւորութեամբ, «Գրիգոր Յակոբեան» գայլիկ եւ արծուիկ միաւորները կազմակերպեցին հանդիսութիւն մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 31 Յուլիս 2011ին, «Աղածանեան» սրահին մէջ:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութիւնն ու ըՍկաուտ. Խորհուրդը, միութիւններու եւ Ազգային վարժարաններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ 500 ծնողներ ու Հ.Մ.Ը.Մ-ականներ:

Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները հնչելէ ետք, հայրենիքով բացման խօսքը արտասանեց «Գրիգոր Յակոբեան» արծուիկ միաւորի պատասխանատու՝ խմբապետու-

հի քոյր Սեւան Պազարճեան, իսկ արաբերէնով հանդէս եկաւ գայլիկ միաւորի պատասխանատու՝ փոխ խմբապետ եղբ. Յովհաննէս Փամփալեան:

Հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը սկսաւ գայլիկներու եւ արծուիկներու երգչախումբը, ղեկավարութեամբ՝ քոյր Հուրի Ղազարեանի: Երգչախումբը յաջորդաբար ներկայացուց «Հայ կամաւորներ», «Սուրիա», «Գայլիկ եմ Հ.Մ.Ը.Մ-ի», «Սերոբ Աղբիւրի յիշատակին» եւ «Արիւնոտ դրօշ» երգերը: Երգչախումբէն ետք, «Կարմիր» վոճմակի եւ երամի եղբայրներն ու քոյրերը ներկայացուցին հայկական պար, իսկ «Կապոյտ» վոճմակը եւ երամը կատարեցին արաբական պար մը: Գայլիկ եւ արծուիկ միաւորներու միամեայ տեղեկագիրը ընթերցեց արծուիկ միաւորի փոխ պատասխանատու՝ քոյր Ալին Սիմոնեան, որմէ ետք գեղարուեստական յայտագիրը եզրափակուեցաւ չափական մարզանքով:



Յաջորդեցին վկայականաց բաշխման եւ աստիճանատուչութեան արարողութիւնները:

Այս առիթով Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի



Սկսուտ. Խորհուրդի խօսքը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ նոր սերունդի դաստիարակութեան մէջ ունեցած դերակատարութեան: Ան ըսաւ, թէ «Հ.Մ.Ը.Մ. հիմնուած օրէն եղաւ դպրոց, որ հայ մանուկին սորվեցուց հաւատարմութիւն Աստուծոյ, ազգին ու հայրենիքին: Հ.Մ.Ը.Մ. հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ ինքզինք արձանագրեց որպէս հայակերտման բերդ եւ ազգապահպանման պարիսպ: Հայ մանուկին համար ան դարձաւ ազգային դաստիարակութիւն ջամբող կրթարան»: Շարունակելով, եղբայրը յայտնեց, որ մեր առօրեայ կեանքին մէջ մանուկներու ներկայութիւնը մեզի կու տայ յոյսը փայլուն ապագայի կերտման, որովհետեւ կեանքը առանց մանուկներու կ'ըլլայ մութ, եւ անոնց ներկայութիւնն է որ կը լուսաւորէ

կէ կեանքի ճանապարհը»: Ապա, եղբ. Սիւլահեան հրաւիրեց Խորէն Քհնյ. Պէրթիզեանը, որ մանուկներու տօնը շնորհաւորելէ ետք՝ ըսաւ. «Դաստիարակութիւնն է որ կ'երաշխաւորէ հայ մանուկին լուսաշող ապագան: Հ.Մ.Ը.Մ-ը «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով իր դուները բացաւ հայ մանուկէն պատրաստելու ապագայի աշխոյժ, կայտառ դեկավար»: Քահանայ հայրը ըսաւ, թէ Արամ Ա. Կաթողիկոսին կոչը կ'ըսէ՝ «Վերածենք բառը խօսքի, խօսքը գործի, գործը ծառայութեան եւ ծառայութիւնը յարուստեան աղբիւրի»: Արդարեւ, մեզմէ իւրաքանչիւրին պարտքն է պատրաստել ճիշդ, պայծառ ապագայ կերտող անհատներ՝ մեր վերելքը շարունակելու համար դէպի լուսաշող ապագայ: Հանդիսութիւնը փակուեցաւ քահանայ հօր «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՉՆՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ական ՊՈՍԹՐՆ

1 4 Յուլիս 2011ին, Ուպրոնի մէջ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու միջ-մասնաճիւղային Չնրդ մարզախաղերը, հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, հիւրընկալութեամբ Պոսթրնի մասնաճիւղին եւ մասնակցութեամբ շրջանի 10 մասնաճիւղերու եւ Մոնթրէալի մասնաճիւղի մարզական խումբերուն:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՆ

Շաբաթ, 2 Յուլիսի երեկոյեան, Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց գնահատանքի երեկոյ մը, հրաւիրելով Չնրդ մարզախաղերու «Իշխան» ու «Իշխանուհի» ժան-ժազ Հաթարը եւ Նիքոլ Պապիկեան-Հաթարը, նուիրատուներ տէր եւ տիկ. Բաֆֆի եւ Նինա Տրսթրքեանը, տէր եւ տիկ. Նշան եւ Մարգրիտ Աթինիգեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանը, Կեդրոնական Վարչութեան եւ Շրջանային Վարչութեան ընթացաւարտ անդամներ եւ ներկայ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ ու քոյրեր, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, նուիրատուներ, կազմակերպող մասնաճիւղի վարչութեան եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ներկայացուցիչներ:

Պոսթրնի Չնրդ մարզախաղերու յանձնախումբի ատենապետ Եղբ. Աւօ Պարմաքեան բարի գալուստի խօսքերով

գնահատեց բոլորը իրենց ցուցաբերած անկեղծ ու անշահախնդիր մօտեցումին համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան իր կարգին գնահատանքի խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք ջանք չխնայեցին Չնրդ մարզախաղերու յաջողութեան: Քոյրեր Երան Սիմոնեան եւ Էլիզապէթ Տրամկոչեան Եռագոյն դրօշով պատուեցին օրուան «Իշխան» ու «Իշխանուհի», որոնք խօսք առնելով գնահատեցին այս ձեռնարկը, յարատեւ յաջողութիւն մաղթելով Հ.Մ.Ը.Մ.ին:

ՅԱՂԹԱՆԱԿԻ

ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ Պրըլինկթրնի «Մարիոթ» պանդոկի շքեղ սրահներէն մէկուն մէջ: Պաշտօնական բաժինը բացուեցաւ պատուոյ հիւրերու մուտքով: Ներկայ էին ութ հարիւրի շուրջ Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ, որոնք յիշատակելի երեկոյ մը ապրեցան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ: Պատուոյ սեղանին վրայ ներկայ էին Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Յ.Դ. Արե-



ւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Փան Աւետիսեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան, Պոսթրնի մասնաճիւղի ատենապետ եղբ. Յակոբ Պեճաքեան եւ այլ հիւրեր:

Օրուան հանդիսավար եղբ. Աւօ Պարմաքեան խօսք առնելով, բարի գալուստ յայտնեց եւ յաջողութիւն մաղթեց մարզախաղերու մասնակիցներուն: Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան: Ան գնահատանքի խօսք ուղղեց բոլոր անդամ-անդամուհիներուն, որոնք հզօր կամքով ու անսահման գոհողութեամբ նուիրուած են Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն վառած ջահը անմար պահելու գործին եւ իրենց բոլոր կարողութիւնները ի սպաս դրած են առողջ ու հայեցի դիմագիծի տէր սերունդ մը պատրաստելու աշխատանքին:

Եղբ. Տէր Վարդանեան շնորհակալութիւն յայտնեց նաեւ մարզախաղերը հիւրընկալող Պոսթրնի մասնաճիւղին եւ բոլոր անոնց, որոնք նպաստեցին միջ-

մասնաճիւղային խաղերու յաջողութեան:

Պատուոյ նախագահ ժան-ժազ Հաժ-ժար ըսաւ, թէ Հ.Մ.-Լ.Մ.-ի առաքելութեան շրջագիծին մէջ այսօր կը վայելենք մեր փոքրիկներուն եւ երիտասարդներուն մասնակցութեամբ կատարուած միջ-մասնաճիւղային Ձերդ մարզախաղերուն հրճուանքը: «Բնականաբար, այս մարզախաղերուն յաջողութիւնը բոլորին կողմէ դրսեւորուած անսակարկ ճիգերու արդար պտուղն է, պատասխանատու մարմիններու, մարզիկներու, արի-արեւոյշներու, երկար ծառայութեան տէր հաւատաւոր Հ.Մ.-Լ.Մ.-ականներու եւ ծնողներու պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ է միայն որ հաւաքական յաջողութեան կրնանք հասնիլ», ըսաւ ան:

Պոսթընի մասնաճիւղի ատենապետ եղբ. Յակոբ Պեճաբեան իր կարգին յայտնեց, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր հիմնադրութենէն ի վեր յամառօրէն կը պայքարի կերտելու համար տիպար ու մաքրամաքուր մարդը, հայը, մարզիկն ու սկաուտը: «Հ.Մ.-Լ.Մ.-ը ծառայութեան հաւատարիմ միութիւն է, ծառայութեան ծնունդ է եւ ինք՝ որպէս կերտիչ, ինչպէս նաեւ համեստ ու խոնարհ ծառայողներու համախմբում, կը ծառայէ իր ոսկետառ նշանաբանին ներքեւ», եզրակացուց ան:

Գեղարուեստական յայտագիրին իր մասնակցութիւնը բերաւ Յլորիտայէն հրաւիրուած երգիչ Սթիւ Իսկէնտէրեան: Իսկ Ուաշինկթընէն Քրիստափոր Արապեան ազգային-յեղափոխական եր-



գերով ներկաները խանդավառեց մինչեւ առաւօտեան ժամը 3:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Մարզախաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 4 Յուլիսի կէսօրին, մասնակցութեամբ 500է աւելի մարզիկներու, որոնք տողանցեցին խանդավառ շարքերով, դրօշակակիրներու եւ Փրովիտընս մասնաճիւղի շեփորախումբին առաջնորդութեամբ: Տողանցեցին նաեւ Հ.Մ.-Լ.Մ.-ի շրջանի 10 մասնաճիւղերու արի-արեւոյշներու, արծուիկներու եւ գայլիկներու խումբերը, մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի եւ օժանդակ յանձնախումբերու անդամները:

Հանդիսութեան ընթացքին արտասանուեցան խօսքեր: Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ եղբ. Վահ-

րամ Դանիէլեան շնորհաւորեց միջ-մասնաճիւղային մարզախաղերու կազմակերպիչ մարմինները, յանձնախումբերը, մասնակից մարզիկներն ու համակիրները եւ մաղթեց, որ բոլոր ձեռնարկները պսակուին փայլուն յաջողութեամբ:

Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան խօսքը երիտասարդութեան ուղղելով, շնորհաւորեց Ձերդ միջ-մասնաճիւղային մարզախաղերու յաջողութիւնը: «Հ.Մ.-Լ.Մ.-ը հիմնադրութենէն ի վեր կը կերտէ տիպար հայը, մարզիկն ու սկաուտը: Այսօր, Յուլիս 4, Ամերիկայի Միացեալ Նահանգները կը տօնէ իր անկախութեան օրը, օր մը որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը կը տօնէ իր յաղթանակի օրը այս ափին վրայ: Եւ հաստատ որ օր մը այս յաղթանակները պիտի տօնենք մեր հայրենի ազատագրեալ հողերուն վրայ: Հ.Մ.-Լ.Մ.-ի սկզբունքները եւ մեր ազգային սրբու-

թիւնը շունչ եւ արիւն տոռած են մեզի եւ մեր բոլորին պարտականութիւնն է պահպանել զանոնք», ըսաւ Առաջնորդը: Շարունակելով, Առաջնորդը հաստատեց, որ այս մարզախաղերը սովորական մրցաշարք մը չեն, ուր կ'արձանագրուին յաղթողներ ու պարտուողներ, այլ անկէ անդին՝ նպատակ ունին Հ.Մ.-Լ.Մ.-ականին վայել ազնիւ մրցակցութեան մթնոլորտի մէջ քով-քովի գալու, նախկին ծանօթութիւններ ամրապնդելու եւ նոր ծանօթութիւններ հաստատելու, որոնք ի վերջոյ կը նպաստեն մեր հաւաքական կամքի ամրապնդման, մէկս միւսով հզօրանալով իւրաքանչիւրս աւելի կը գօտեպնդուի Հ.Մ.-Լ.Մ.-ի նուիրական գաղափարներով եւ վերանորոգուած կորովով վերադառնալու մեր շրջանները՝ շարունակե-



յու համար այն գործն ու ծառայու-
թիւնը, ի խնդիր մեր ազգային գիտակ-
ցութեան պահպանման, ազգասիրու-
թեան ու հայրենասիրութեան, ինչպէս
նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի ընդմէջէն ծառայելու
մեր համայնքի կարիքներուն, հայրենի-
քի հզօրութեան ու պարգացման:

Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու
Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ
Ժան Աւետիսեան իր խօսքին մէջ գնա-
հատեց Հ.Մ.Ը.Մ-ի անունն ու խորհուր-
դը: Ան նշեց, որ դժուար է երեւակայել
սփիւռքահայութիւնը առանց Հ.Մ.-
Ը.Մ-ին, եւ աւելցուց, որ հիմնադիրները
իրենց աննահանջ հաւատքով եւ հայա-
վայել վճռականութեամբ հիմը դրին
հայ պատանին ու երիտասարդին հո-
գին, միտքը եւ մարմինը կերտող մեծ
դպրոցին եւ յղացան նշանաբանը՝
«Բարձրացիր-բարձրացուր»ը, որ ինք-
նին գերակշիռ իմաստ ունի, այսինքն՝
իր անձէն առաջ եւ անձէն ետք, իր նմա-
նին ծառայելու նուիրական ոգին ու
յանձնառութիւնը, ամբողջական հաւա-
տարմութիւնը»:

Շրջանային Վարչութեան ատենա-

պետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան
ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան շրջանը
կը ջանայ իր լաւագոյնը մատուցել եւ
նորահաս սերունդի դաստիարակու-
թեան ընդհանուր գործին իր մեծ ներդը-
րումը ունենալ: Շնորհակալութիւն
կ'ուզեմ յայտնել անոնց, որոնք տարի-
ներ շարունակ խորին համոզումով կը
հաւատան Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան
ու նուիրական գործին եւ իրենց նե-
ցուկն ու աջակցութիւնը միշտ ի սպաս
կը դնեն այս միութեան աշխատանքին»:

Կեդրոնական Վարչութեան ներկա-
յացուցիչ եղբ. Վահրամ Դանիէլեան
յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքները
եւ մեր ազգային սրբութիւնները շունչ
եւ արիւն տուած են մեզի եւ մեր բոլո-
րին պարտականութիւնն է պահպանել
գանոնք: Այս մեծ կազմակերպութիւնը
ոչ միայն հաւատարիմ մնաց իր հիմնա-
դիրներու տեսլականին, այլ՝ այդ տես-
լականին ամուր կառչած մնալով, ժա-
մանակին հետ քայլ պահեց ու հայրենա-
գուրկ հայ սերունդներուն ջամբեց ազ-
գային գիտակցութիւն, անոր մէջ սեր-
մանեց հաւատարիմ հայու, վեհանձն,

կարգապահ ու ազնիւ մարդու բոլոր
նախադրեալները», եզրակացուց ան:

Ինչպէս ծանօթ է, Մեծի Տանն Կիլիկի-
ոյ Արամ Ա. Կաթողիկոսը 2011 տարին
հռչակած է «Հայ Մանուկի Տարի»: Այս
առիթով, Առաջնորդ Օշական Արք. Զո-
րայեան նամակով մը թելադրած էր
բարձրագոյն աստիճանի հոգածութիւն
եւ նախանձախնդրութիւն ցուցաբերել
հայ մանուկի նկատմամբ: Արդ, խումբ
մը հայ մանուկներ «Հայ Մանուկի Տա-
րի»ն նշեցին փուլերով, խանդավա-
ռելով փոքրերն ու տարեցները:

Դաշտն ու երկինքը մերն էր այդ օր:

Փակման հանդիսութիւնը աւարտելէ
առաջ, տեղի ունեցաւ ախոյեան խումբ-
երու բաժակներու բաշխումը: Եղբ.
Արամ Մարկոսեանի յիշատակի բաժակին
տիրացաւ Նիւ Եորքի մասնաճիւղը, իր-
րեւ լաւագոյն մասնաճիւղ: Մասնաճիւ-
ղը տարիներու դադարէ ետք վերակազ-
մեց իր մարզական ու սկստական
շարքերը եւ ի գին ամէն գոհողութեան
մէկ օրուան համար իր սկստական
խումբը մղեց մասնակցելու Չարք մար-
զախաղերու փակման հանդիսութեան:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 37ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Միացեալ Նահանգներու
37րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը
տեղի ունեցաւ 21-23 Հոկտեմբեր 2011, հիւրըն-
կալութեամբ Փրովիտընսի մասնաճիւղի, մաս-
նակցութեամբ շրջանի տասը մասնաճիւղերու՝
Ալպընիի, Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի, Շիքակոյի, Հարաւային
Ֆլորիտայի, Ուաշինկթընի, Պոսթընի, Տիթթոյթի, Փրովիտըն-
սի եւ Ֆիլատելֆիոյ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մի-
ացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի
Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչներու,
ընդհանուր՝ 45 անդամներ: Խորհրդակցական ձայնով մաս-
նակցողներու շարքին էին Հ.Յ.Դ. շրջանի Կեդրոնական Կոմի-
տէի ներկայացուցիչը, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Միացեալ Նա-
հանգներու Շրջանային Վարչութեան մնացեալ անդամները,
Շրջանային մարզական յանձնախումբի եւ Սկստական
Խորհուրդի ներկայացուցիչները, ուղեկից կազմակերպու-
թիւններու ներկայացուցիչները եւ հրաւիրեալներ:

Ժողովին բացումը կատարեց ընթացաւարտ Շրջանային
Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան,

որու բարի գալուստի խօսքէն ետք ժողովը ընտրեց իր առ-
ժամեայ դիւանը, ատենապետ՝ եղբ. Լեւոն Փալեան, ատենա-
դպրուհի՝ քոյր Արչօ Գանթարճեան: Ժողովին մնայուն
դիւանի անդամներ ընտրուեցան ատենապետներ՝ եղբայրներ
Վահէ Թանաչեան եւ Շանթ Ժամկոչեան, ատենադպիրներ՝
քոյր Լորիկ Փիլիպոսեան եւ Եղբ. Ստեփան Զիլոյեան:

Ներկայացուցչական Ժողովի օրակարգին անցնելէ առաջ,
յաջորդաբար խօսքեր առին հիւրընկալ Փրովիտընսի մասնա-
ճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Դարբինեան, Փրովիտընսի
Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Ա.
Քհնյ. Պաղսարեան, Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտէի ներկա-
յացուցիչ Յակոբ Տօնոյեան, իսկ Շրջանային մակարդակի
ներկայացուցիչներէն՝ Հ.Օ.Մ-ի Շրջանային Վարչութեան
ներկայացուցիչ Մարգրիտ Ստեփանեան, Հ.Ե.Դ-ի Արեւելեան
շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Գէորգ
Զաւուշ Մեսրոպեան, որոնք ժողովին փոխանցեցին իրենց բա-
րեմաղթութիւնները: Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկա-
յացուցիչ Հրայր Պարոնեան իր խօսքին մէջ նշեց Հ.Մ.Ը.Մ-ի
դերը եւ անհրաժեշտութիւնը հայապահպանման աշխատան-

քին մէջ, եւ թէ՛ այս ժողովները առիթը կու տան, որ Հ.Մ.-Ը.Մ.ը վերամշակելի գործունէութիւնները դէպի նորանոր նուաճումներ: Ապա խօսք առաւ ընթացաւարտ Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան, յայտնելով որ հպարտ կը զգայ որ մաս կը կազմէ այս կազմակերպութեան: Ան շնորհակալութիւն յայտնեց պատկառելի ժողովին, որ այս գործը փստահեցաւ Երջանային Վարչութեան: Վերջին խօսքը առաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան: Եղբայրը յաջողութիւն մաղթեց շրջանի պատկառելի ժողովին, ապա շնորհաւորեց ընթացաւարտ Երջանային Վարչութեան տարած աշխատանքները եւ յայտնեց, թէ ներկայացուցիչներու շինիչ առաջարկներով պիտի կարենանք բարելաւել եւ երկարաշունչ ծրագիրներ մշակել՝ դասաւորելու մեր բոլոր աշխատանքներուն շարունակականութիւնը:



Այնուհետեւ, ժողովը սկսաւ իր աշխատանքներուն, եւ առաջին հերթին ունկնդրեց տասը մասնաճիւղերու նիւթաբարոյական գործունէութեան միամեայ տեղեկագիրները եւ ապա՝ ընթացաւարտ Երջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը:

Համաձայն տեղեկագիրներու, շրջանը ունեցած է յաջող գործունէութիւն: Ներկայիս Հ.Մ.-Ը.Մ.-ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը ունի-

- 1200է աւելի անդամ-անդամուհիներ:
- 500է աւելի գայիկ, արծուիկ, սկաուտ, արենոյշ, պարման եւ պարմանուհիներ:
- 70է աւելի մարզական խումբեր՝ բաղկացած Ֆութպոլի, վոլիպոլի, պասքէթի, փինկ-փոնկի, լողի եւ աթլետիկայի երկսեռ խումբերէ, ծիլ, փոքր, կրասեր, երէց եւ վեթերան դասակարգերով:
- Անցնող երկու տարիներուն, շրջանը կազմակերպած է հետեւեալ գործունէութիւնները-
- Մասնաճիւղերու վարչական կազմի դիւաններու երկու խորհրդաժողովներ:
- Մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդներու երկու խորհրդաժողովներ:
- Երջանային սկաուտական սեմինարներ:
- Միջ-մասնաճիւղային երկու մարզախաղեր:
- Երջանային սկաուտական երկու ընդհանուր բանակումներ:
- Հրատարակած է 2010ի եւ 2011ի գունաւոր եւ պատկերա-

զարդ օրացոյցները:

- Մասնակցած է Համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական Ցրդ մարզական խաղերուն, Հայաստանի մէջ:

- Մասնակցած է Համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական Ծրդ սկաուտական բանակումին, Հայաստանի մէջ:

- Մասնակցած է Հ.Մ.-Ը.Մ.-ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովին, Ծաղկաձոր, Հայաստանի մէջ:

Ժողովը լսելէ ետք Երջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրը եւ հաշուեկշիռը, հանգամանօրէն քննարկեց կատարուած աշխատանքները եւ հասաւ համապատասխան եզրակացութեան՝ մատնանշելով այն գործունէութիւնները, որոնք բարեփոխութեան կը կարօտին: Ժողովը իր գնահատանքը յայտնեց Երջանային Վարչութեան տարած աշխատանքներուն, որոնք զգալի նուաճումներ արձանագրած են 2010 - 2011 տարեշրջանին:

Ներկայացուցչական ժողովը մշակեց շրջանին յառաջիկայ երկամեակի մարզական, սկաուտական, կազմակերպչական, նիւթական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, օրացոյցի, Հ.Մ.-Ը.Մ.-ի կայքէջի եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Ծնամեակի ծրագիրները, համադրելով շինիչ առաջարկներ՝ բարելաւելու եւ դիմագրաւելու շրջանին պահանջները: Երբ ունակելով օրակարգը, ժողովը քննարկեց նորընտիր Երջանային Վարչութեան 2012-2013 տարեշրջանի նախահաշիւը:

Բոլոր հարցերու քննութեան եւ վաւերացումի աւարտին, ժողովը ընտրեց նորընտիր Երջանային Վարչութիւն, բաղկացած հետեւեալ անդամներէ-

- Եղբ. Յովսէփ Էրջանեան
- Քոյր Արշօ Գանթարճեան
- Քոյր Էլիզապէթ Դրամկոչեան
- Եղբ. Թորոս Ոսպիկեան
- Եղբ. Յովիկ Արգարեան
- Եղբ. Արամ Գայսերեան
- Եղբ. Պերճ Փափագեան

Ժողովի աւարտին, ընթացաւարտ Երջանային Վարչութեան ատենապետը, Հ.Յ.Դ. կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը գնահատանքի խօսքեր ուղղեցին դիւանին եւ ներկայացուցիչներուն, նաեւ՝ բարեմաղթութիւններ, յաջողութիւններ եւ կորովի մաղթանքներ յայտնեցին նորընտիր Երջանային Վարչութեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՈՒԱՇԻՆԿԹՈՒՆԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 40ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ -ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Վահե Թանաչեան ՊՈՍԹԸՆ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան ազգային գաղափարաբանութիւնը 1918ին Պոլիսէն թեւ առնելով մուտք գործեց մայր հայրենիք, ապա՝ Միջին Արեւելք, Եւրոպա եւ Աւստրալիա: 1971ին հասաւ Միացեալ Նահանգներու արեւելեան ափերը եւ հոն, երկրի մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ, իջեւան հաստատելով, հիմը դրուեցաւ Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի առաջին մասնաճիւղին, որուն 40ամեակը պատշաճ կերպով նշուեցաւ անցնող ամիսներուն:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութիւնը որոշեց մեծ շուքով տօնել իր հիմնադրութեան 40ամեակը եւ այս նպատակով Մարտ 2011ին յառաջացուց յանձնախումբ մը:

Յանձնախումբը առաջին օրէն աշխատանքի լծուելով, պատրաստեց 40ամեակը նշող ձեռնարկներու շարք մը, որ ընթացաւ հետեւեալ ձեւով:

●1 Մայիս 2011ին, Մերիլընտ Նահանգի Փոթոմաք քաղաքի համայնքային կեդրոնի մը մէջ, հին ու նոր Հ.Մ.Ը.Մ.ականներ հաւաքուելով փոխանակեցին յիշատակելի նկարներ եւ զրուցեցին անցեալի օրերու եւ անդամներու մասին: Օրուան ընթացքին քանի մը եղբայրներ խօսքեր առնելով ներկաներուն պատմեցին Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց կեանքէն հաճելի յուշեր: Այս ձեռնարկը առիթ մը եղաւ աշխուժացնելու գաղութի Հ.Մ.Ը.Մ.ականները եւ համակիրները՝ ի պատրաստութիւն յաջորդ նախաձեռնութիւններուն:

●24-26 Յունիս 2011ին տեղի ունեցաւ մասնաճիւղի սկստական տեղական բանակումը, որ նուիրուեցաւ 40ամեակի տարեդարձին:

●11 Սեպտեմբեր 2011ին տեղի ունեցաւ Ֆութպոլի մրցում մը՝ մասնաճիւղի

խումբին եւ վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներու միջեւ: Ծնողներու եւ համակիրներու ներկայութեամբ տեղի ունեցած այս խաղը ստեղծեց մեծ խանդավառութիւն:

Վարչութեան եւ կազմակերպիչ յանձնախումբին կողմէ նկատի առնուած եզրափակիչ եւ հիմնական ձեռնարկը տեղի ունեցաւ Շարաթ, 24 Սեպտեմբեր 2011ին, շքեղ ճաշկերոյթ պարահանդէսով մը՝ Պաթեստայի (Մերիլընտ) «Հայաթ» պանդոկին մէջ:

Պարահանդէսը հովանաւորեց Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զորոյեան: Սրբազանը ներկայացուց Առաջնորդական փոխանորդ Անուշաւան Եպս. Դանիէլեանը: Պատուոյ հիւրերու շարքին էին Ուաշինկթընի Ս. Խաչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս Քհնյ. Ագթաւուքեան, Ս. Մարիամ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Յովսէփ Քհնյ. Կարապետեան, Արցախի Հանրապետութեան Ուաշինկթընի գրասենեակի ներկայացուցիչ Արամ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ քոյրերան Սիմոնեան, Հ.Յ.Դ. տեղւոյն «Սեպուհ» կոմիտէի ներկայացուցիչ Յովսէփ Աւագեան, Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգաբարձութեան, «Համաստեղ» վարժարանի, ՀՕՄ-ի, Համազգայինի եւ Հ.Ե.Դ.ի վարչութիւններու ներկայացուցիչներ:

Ճաշկերոյթ-պարահանդէսին պաշտօնական բաժինը բացուեցաւ սկստական երգերու եւ դրօշակակիրներու տողանցքով, որմէ ետք յաջորդաբար երգուեցան Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

Օրուան հանդիսավար եղբ. Վահէ



Ներկայ եւ վեթերան խումբերու ֆութպոլի մրցում:



Պարահանդեսի պատուոյ սեղանը:

Թանաչեան բեմ հրաւիրեց Առաջնորդական փոխանորդ Անուշաւան Եպս. Դանիէլեանը, կատարելու ճաշի օրհնութիւնը:

Մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Վահէ Թանաչեան: Բարի գալուստի խօսքէ ետք, ան շնորհաւորեց ներկաները մասնաճիւղի հիմնադրութեան 40ամեակին առիթով եւ ըսաւ, թէ «40ամեակի այս նուաճումը կը պարտինք քանի մը իրականութիւններու, որոնցմէ առաջինը՝ 1918ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնն է, երբ Պոլսոյ մէջ մեր հիմնադիրները գեղեցիկ գաղափարը յղացան մէկ դրօշի տակ համախմբելու մարզական գանազան խումբեր: Համախմբումի այս գաղափարը շուտով դարձաւ ազգային ազնիւ գաղափարաբանութեան՝ մարմնամարզի եւ սկաուտութեան միջոցով պատրաստել ապագայ ազգանուէր երիտասարդութիւն: Միւս իրականութիւնը, այս գաղափարաբանութեան վերականգնումն էր Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանին մէջ, երբ Հ.Մ.Ը.Մ.ի տեսլականով սոցորուած խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ 1971ին հիմնեցին Ուաշինկթընի մասնաճիւղը, յառաջացնելով նախ մարզական խումբեր, ապա՝ սկաուտական շարժում: Մասնաճիւղի հիմնադիր սերունդին յաջորդեցին նուիրեալ սերունդներ, որոնք բարձր պահեցին մասնաճիւղին դրօշը:

40ամեակի նուաճման այլ իրականութիւնը՝ ինքնին Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնն է՝ գաղափարաբանութիւն մը,

որ 93 տարիներ շարունակ, աշխարհացրիւ երիտասարդութիւնը համախմբեց ազգի ծառայութեան դրօշին տակ»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Թանաչեան վարչութեան անունով կատարեց հետեւեալ յայտարարութիւնը. «Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինկթընի վարչութիւնը մասնաճիւղին հիմնադրութեան 40ամեակին առիթով կ'ուզէ պարգեւատրել քոյր Երան Սիմոնեանը՝ Հ.Մ.Ը.Մ.ին ու մանաւանդ մասնաճիւղին մատուցած իր տարիներու ծառայութեան համար»: Ապա, ան բեմ հրաւիրեց Ուաշինկթընի վարչութեան ատենապետ եղբ. Համօ Սարտարպէկեանը՝ քոյր Երանին յանձնելու պարգեւատրման յատուկ յուշատախտակը:

Յաջորդ խօսքը առնողը եղաւ Հ.Յ.Դ. «Սեպուհ» կոմիտէի ներկայացուցիչ Յովսէփ Աւագեան: Ան մեծապէս ողջունեց յրեւեար մասնաճիւղին հիմնադրութեան 40ամեակի երեկոն, զոր պէտք

է յաղթանակի երեկոյ յայտարարել, ըսաւ ան. «յաղթանակ մը՝ որուն ամէն մէկ ուղղմանակաւ վրայ ներկաներէն իւրաքանչիւրը իր նիւթաբարոյական օժանդակութեամբ, Հայրենիքէն հեռու... այս երկրին մէջ ամուր պահեց Հ.Մ.Ը.Մ.ը, ամուր պահեց Եռագոյնը եւ մանաւանդ ամուր եւ անարատ պահեց Հ.Մ.Ը.Մ.ի շուքին տակ հասակ նետած նորանոր սերունդները: Ան շարունակեց հաստատելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը որպէս Հ.Յ.Դ.ի ուղեկից եւ նոյն նպատակները հետապնդող կազմակերպութիւն, հայ իրականութեան մէջ իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով, մեր ժողովուրդին տուած է մէկ եւ եզակի արժէք մը, որն է՝ ղեկավարութեան երթը յանձնել այնպիսի երիտասարդ սերունդներու, որոնց կարելի պիտի ըլլայ ապաւինիլ: Ան իր խօսքը փակեց յիշելով քոյր Երան Սիմոնեանի պարգեւատրման առիթը, որ տարիներու անոր համեստ ծառայութիւնն է, առանց նկատի առնելու հանգամանքը կամ վարած պաշտօնները: Այս մէկը կու գայ Քրիսեաններու, Յակոբեաններու, Վարդգէս Տէր Կարապետեաններու եւ Վարդան Բախշեաններու խորհուրդներէն, ըստ որուն՝ Հ.Մ.Ը.Մ.ը եւ մենք ազգովին սորված ենք, որ պարգեւատրման մը համար նկատի չեն առնուիր ենթակային նիւթականը կամ առարկայական տուեալները, այլ՝ միայն ու միայն անոնց համեստ ու ազնիւ ծառայութիւնը: Թող Հ.Մ.Ը.Մ.ը իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով յաւերժ ծառայէ հայ ժողովուրդի վերելքին:





Օրուան պարգևատրեալ քոյր Երան Գրիգորեան, շքանշանակիրներ Յովսէփ Էրջէնեան եւ Համօ Սարգսրէկեան Անուշաւան Եպս. Դանիէլեանի հետ:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ խօսք առաւ քոյր Երան Սիմոնեան, որ շնորհաւորեց մասնաճիւղին 40ամեակը եւ յիշեց Ուաշինկթընի մասնաճիւղին Արեւելեան շրջանի առաջին մասնաճիւղը ըլլալու հանգամանքը: Ան հաստատեց, որ մասնաճիւղի շարքերէն անցած են հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ որպէս մարզիկներ, սկաուտներ եւ անդամներ, մարզելով իրենց մարմինը, միտքն ու հոգին, ձգտելով դէպի լաւը, բարձրը եւ ազնիւը, սիրելով իրենց հայրենիքը, ընտանիքը եւ շրջապատը:

Իր խօսքին աւարտին, քոյր Երան բարձր գոհունակութեամբ յայտարարեց, որ Ուաշինկթընի վարչութեան առաջարկով եւ Շրջանային Վարչութեան որոշումով, 40ամեակի առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի «Մառայութեան» շքանշանով պիտի պարգևատրուին Հ.Մ.Ը.Մ-ականներ, որոնք երկար տարիներ ծառայած են միութեան վսեմ նպատակին: Պարգևատրեալ եղբայրներն են՝ Լեւոն Փալեան, Յովսէփ Էրջէնեան եւ Համօ Սարտարպէկեան:

Քոյր Երան հակիրճ ձեւով ներկայացուց պարգևատրեալ եղբայրներուն կենսագրականները եւ անոնց մատուցած ծառայութիւնը (տեսնել էջ 33): Ապա, ան բեմ հրաւիրեց Անուշաւան Եպս. Դանիէլեանը՝ յանձնելու շքանշանները: Եղբ. Լեւոն Փալեան Հայաստան գտնուելով ներկայ չէր հանդիսութեան:

Օրուան վերջին խօսք առնողը եղաւ Առաջնորդական փոխանորդ Անուշաւան Եպս. Դանիէլեան: Ան Սրբազան Հօր անունով սրտանց շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի կաղնիէն ընձիւղած՝ Ուաշինկթընի մասնաճիւղին 40ամեակը: «Հ.Մ.Ը.Մ. եղած է այն օճախը, որ ո՛չ միայն կը կերտէ մարմին ու միտքը, այլ՝ կերտած է, կը կերտէ եւ պիտի կերտէ նկարագիրը հայ պատանիին, հայ երիտասարդին ու հայ մարդուն: Իր սկաուտական քայլերգին մէջ երբ Հ.Մ.Ը.Մ-ականը կ'երգէ «Ձանք ճիգ թափէ դու ամէն օր գործադրելու բարիք մը նոր», չկայ աւելի վեհ պատգամ մը, վսեմ նշանաբան մը, քան՝ բարութեան աղբիւր եղող եւ ամէն առաւօտ ծագող արեւուն հետ բարիք մը գործելը: Հ.Մ.Ը.Մ-ականները հայ ժողովուրդի ազնուական եւ պատուական այն տար-



Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տեո Վարդանեան

րերն են, որոնք միշտ պատրաստ եղած են ծառայելու, նուիրուելու եւ զոհուելու, իրենց ընտանիքին եւ ընտանիքէն վեր՝ մեծ ընտանիքին՝ եկեղեցիին, ազգին եւ ինչու չէ նաեւ մարդկութեան»:

Սրբազան հայրը իր խօսքը փակեց ըսելով. «Վստահ եմ, ձեզմէ շատեր կը հետեւին պատատաին վրայ յաջորդաբար անցնող նկարներուն, որոնք ձեւով մը անցնող 40 տարիներու պատմութիւնը ցոյց կու տան: Իմ մաղթանքս եւ աղօթքս է, որ հայ իրականութեան մէջ գործող բոլոր մարմինները, միութիւնները, հաստատութիւնները, բայց մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ-ը իր նախնիներէն ժառանգած ոգին իր մէջ պահէ եւ փոխանցէ յաջորդող սերունդներուն: Բայց աւելի մեծ մաղթանքս եւ աղօթքս այն է, որ այս երիտասարդները, որոնք տարիներ շարունակ մարզախաղեր եւ բանակումներ կազմակերպեցին, գայ օրը, երբ 93 տարիներ առաջ Պոլսոյ մէջ ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ-ը եւ Հ.Մ.Ը.Մ-ականները մարզախաղեր եւ բանակումներ կազմակերպեն պատմական Հայաստանի մէջ՝ Արարատի լանջին՝ եւ հաստատեն որ իրենք տէրն են այդ հողին»:

Սրբազան Հօր քաջայերական այս խօսքերով վերջ գտաւ օրուան պաշտօնական բաժինը եւ բեմ հրաւիրուեցան սիրուած երգիչ Ատիս Հարմանտեան եւ իր նուագախումբը, որոնք փունջ մը երգերով ճոխացուցին երեկոն: Խանդավառութիւնը վառ պահեց նաեւ Պոսթրնէն ժամանած ձայնի հաղորդավար Քրիս Հապիպեան:

Նշենք, որ սեղաններու վրայ տեղադրուած էր գեղեցիկ գրքոյկ մը, որուն մէջ գետեղուած էին ուղեկից կազմակերպութիւններու պատգամները, Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ համակիրներու շնորհաւորական եւ գնահատական խօսքերը:

Ներկաները ուրախ տրամադրութեամբ մեկնեցան, տողորուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրանալու» եւ «Բարձրացնելու» նշանաբանին ոգիով, նոյն եռանդով ու աւելի մեծ կորովով շարունակելու համար Հ.Մ.Ը.Մ-ի Ուաշինկթընի մասնաճիւղին 40ամեայ յաղթական եւ պանծալի երթը:

ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ



**ԵՂԲ. ԼԵՒՆ
ՓԱԼԵԱՆ**

Եղբայր Լեւոն Փալեան ծնած է 2 Յունուար 1920ին, Երեւան, Հայաստան: 1933ին անդա-

մակցած է Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի շարքերուն, որպէս սկաուտ: 1945ին մեկնած է Թեհրան եւ անդամակցած է տեղւոյն Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան: 1957ին գաղթած է Միացեալ Նահանգներ եւ մասկազմած է Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ համայնքին եւ Հ.Յ.Դ «Սեպուհ» կոմիտէութեան: 1971ին, Հ.Ս.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղին հիմնադրութեամբ, կրկին միացած է Հ.Ս.Ը.Մ.ին եւ ցարդ կը շարունակէ իր անդամակցութիւնը: 40 տարիներու իր ծառայութեան վաստակով, եղբայր Լեւոն մասնակցած է մասնաճիւղի գանազան աշխատանքներուն՝ իբրեւ յանձնախումբի կամ տեղական վարչութեան անդամ:

Ան բազմիցս մասնաճիւղը ներկայացուցած է Հ.Ս.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Ժողովներուն: Սեպտեմբեր 2011ին, խորհրդակցական ձայնով մասնակցած է Հ.Ս.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

Հ.Ս.Ը.Մ.ի կողքին, եղբայր Լեւոն ծառայած է նաեւ որպէս Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգաբարձու, Հ.Յ.Դ. «Սեպուհ» կոմիտէի անդամ եւ Համագայինի կրթական եւ մշակութային միութեան վարչական: Ան սատարած է ՀՅԴ-ի «Համաստեղ» դպրոցին եւ Հ.Ե.Դ.ի աշխատանքներուն:



**ԵՂԲ. ՅՈՎՍԷՓ
ԷՐՋԵՆԵԱՆ**

Եղբայր Յովսէփ Էրջենեան ծնած է 5 Հոկտեմբեր 1950ին, Աթէնք, Յունաստան: 1951ին

ծնողքին հետ փոխադրուած է Արժանթին, ուր 1956ին Հ.Ս.Ը.Մ.ի անդամակցած է իբրեւ մարզիկ: 21 Ապրիլ 1964ին, ծնողքին հետ փոխադրուած է Օնթարիա, Գանատա: 1968ին, Օնթարիոյ մասնաճիւղին հիմնադրութեամբ, կրկին միացած է Հ.Ս.Ը.Մ.ին, որպէս ֆութպոլի, պասքեթպոլի եւ աթլէթի մարզիկ: 29 Դեկտեմբեր 1979ին փոխադրուած է Միացեալ Նահանգներ, Ուաշինկթընի մասնաճիւղին մէջ շարունակելով Հ.Ս.Ը.Մ.ականի իր կեանքը: 1981ին, առաջին անգամ ըլլալով ընտրուած է Հ.Ս.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան անդամ, որմէ ետք բազմիցս եղած է վարչական եւ վարած է մարզական ու սկաուտական ներկայացուցիչի եւ ատենապետի պաշտօններ: 1981ին, եղբայր Էրջենեան ընտրուած է Արեւելեան Մ. Նահանգներու պասքեթպոլի ներկայացուցչական խումբի մարզիկ եւ մասնակցած է Համա-Հ.Ս.Ը.Մ.ական առաջին մարզախաղերուն, Թորոնթօ եւ Մոնթրէալ Գանատա:

1985-1989 եղած է Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եւ ծառայած է որպէս մարզականի ներկայացուցիչ:

1987ին ընտրուած է Հ.Ս.Ը.Մ.ի Արեւելեան Նահանգներու Շրջանի պատգամաւոր, մասնակցելու Հ.Ս.Ը.Մ.ի 4րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

Եղբայր Էրջենեան բազմիցս մաս-

նաճիւղը ներկայացուցած է Հ.Ս.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Ժողովներու:



**ԵՂԲ. ՀԱՄՕ
ՍԱՐՏԱՐԱԿԵԱՆ**

Եղբ. Համօ Սարտարակեան ծնած է 10 Յունուար 1952ին, Թեհ-

րան, Պարսկաստան: Փոխադրուելով Ամերիկայի Միացեալ Նահանգներ, 1982ին անդամակցած է Հ.Ս.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղի շարքերուն, որպէս ֆութպոլիստ:

1984ին, առաջին անգամ ըլլալով ընտրուած է Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան անդամ: Նոյն տարին, իր ջանքերով ստեղծուած են մասնաճիւղին վոլիպոլի տղոց ու աղջկանց խումբերը, որոնց մարզիչը եղած է տարիներ շարունակ:

1984-2011, եղբ. Սարտարակեան շարունակաբար ընտրուած է Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան անդամ, բացառութեամբ քանի մը տարուան միայն: Այս ընթացքին ան եղած է վարչութեան մարզական ներկայացուցիչ: 2010 եւ 2011 տարիներուն ան ստանձնած է ատենապետի պաշտօն:

Եղբայր Սարտարակեան յաճախ մասնաճիւղը ներկայացուցած է Հ.Ս.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Ժողովներուն:

1994ին, Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ (Ուաշինկթըն եւ Նիւ Երրզի) տեղի ունեցած Համա-Հ.Ս.Ը.Մ.ական Ե. Մարզախաղերուն, ան ստանձնած է կազմակերպիչ յանձնախումբի փոխ ատենապետի պաշտօն: Ընտրուած է նաեւ Արեւելեան Մ. Նահանգներու վոլիպոլի տղոց ներկայացուցչական խումբի մարզիչ:

2006ին, Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած միջ-մասնաճիւղային 16րդ մարզախաղերուն, ան ստանձնած է կազմակերպիչ յանձնախումբի ատենապետի պաշտօն:



Հ.Ա.Ը.Մ.Ի ՓՐՈՎԻՏԸՆՍԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻ 30ԱՄԵԱԿԻ ՇՔԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՄ

Թղթակից ՓՐՈՎԻՏԸՆՍ

Հ.Ա.Ը.Մ.Ի Փրովիտընսի մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակը մեծ շուքով տօնակատարւեցաւ ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 22 Հոկտեմբեր 2011ի երեկոյեան, Ուորուիքի «Գրաուն Փլազա» պանդոկի շքեղ սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Ա.Ը.Մ.Ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներու եւ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Ա. Քհնյ. Պաղսարեանի: Հանդիսութեան նախագահութիւնը ստանձնած էին գաղութի հանրածանօթ ազգայիններէն տէր եւ տիկին Ռամօն Զօրապետեան:

200 Հ.Ա.Ը.Մ.ականներու եւ համակիրներու ներկայութեան, երեկոն բացւեցաւ սկաուտներու եւ դրօշակակիրներու տողանցքով, որմէ ետք յաջորդաբար երգուեցան ամերիկեան, հայկական եւ Հ.Ա.Ը.Մ.ի քայլերգները՝ քոյր Լենա Մինասեանի կողմէ: Տէր Զօր բացման աղօթքէն ետք, մէկ վայրկեան լռութեամբ յարգուեցաւ յիշատակը մասնաճիւղի հանգուցեալ հիմնադիրներուն:

Օրուան հանդիսավարներն էին քոյր Սիրան Գրիգորեան եւ եղբ. Բաֆֆի Ռշտունի: Անոնք ներկայացուցին պատուոյ հիւրերը, Հ.Ա.Ը.Մ.Ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչները, Հ.Յ.Դ.Ի, Հ.Օ.Մ.Ի, եկեղեցւոյ, ուղեկից կազմակերպութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ յօբելար մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներն ու 30ամեակի յանձնախումբին անդամները, որոնք եղբ. Յակոբ Խաչատուրեանի ատենապետութեամբ՝ յաջողութեամբ

պսակեցին յիշատակելի այս տարեդարձը, ճոխ պարահանդէսով եւ յուշամատեան գրքոյկի մը հրատարակութեամբ:

Այս առթիւ, ճաշի սպասարկութենէն առաջ, ցուցադրուեցաւ եղբ. Արի Նալպանտեանի կողմէ պատրաստուած **փաուլըր-փոյնթի** աշխատանքը, որ կենդանի պատկերն էր մասնաճիւղին իրագործած յաջողութիւններուն, անցնող 30 տարիներու ընթացքին:

Վարչութեան ատենապետ եղբ. Սարգիս Դարբինեան փոխանցեց մասնաճիւղին շնորհաւորական խօսքը՝ երախտագիտական զգացումներ յայտնելով բոլոր հիմնադիրներուն, անցեալի եւ ներկայի նուիրեալ անդամներուն, որոնք Հ.Ա.Ը.Մ.Ի պատիւը միշտ բարձր կը պահեն: Տեղւոյն վարչութեան կողմէ ան յատուկ յուշատախտակով մը պատուեց քոյր Սիրան Գրիգորեանը եւ եղբ. Բաֆֆի Ռշտունին, որոնք վերջին տարիներուն յաջողութեամբ ստանձնած են սկաուտութեան շարքերը վարելու պատասխանատուութիւնը: Մասնաճիւղը յատուկ յուշատախտակով պատուեց նաեւ եղբ. Յակոբ Տօնոյեանը, որ մեծ պատրաստակամութեամբ կ'օգնէ շաբաթօրեայ սկաուտական հաւաքներու կարգապահութեան եւ կազմակերպման գործին:

Ապա խօսք առաւ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Ա. Քհնյ. Պաղսարեան: Ան իր պատգամով դրուատեց Հ.Ա.Ը.Մ.Ի հիմնադիրները, անդամները եւ համակիր-



Պատուոյ յուշատախտակ ստացած Հ.Ա.Ը.Մ.ականներ վարչութեան ատենապետին հետ: Աջէն ձախ՝ ատենապետ եղբ. Սարգիս Դարբինեան, եղբ. Բաֆֆի Ռշտունի, քոյր Սիրան Գրիգորեան եւ եղբ. Յակոբ Տօնոյեան:

ները, որոնց 30 տարիներու տքնաջան աշխատանքին շնորհիւ այսօր Փրովիտընսի գաղութը կը վայելէ սկաուտներու գործակցութիւնը գաղութին բոլոր մարզերուն մէջ, ինչպէս նաեւ՝ եկեղեցւոյ խորանին վրայ:

Հանդիսավարը հրաւիրեց եղբ. Յակոբ Խաչատուրեանը, որպէսզի ներկայացնէ օրուան «թագաւորն» ու «թագուհին»՝ տէր եւ տիկին Ռամօն եւ Սոնիա Զօրապետեանները: Եղբ. Խաչատուրեան յայտնեց, որ 1981ին, երբ Հ.Ա.Ը.Մ.Ի տեղւոյն մասնաճիւղը հիմնուեցաւ Մեսրոպ Ա. Քհնյ. Թաշճեանի եւ Հ.Յ.Դ.Ի ջանքերով, Ռամօն Զօրապետեան եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետն էր: Ան ջերմօրէն գնահատեց Հ.Ա.Ը.Մ.Ի տարած արդիւնաբեր աշխատանքը գաղութին երիտասարդ սերունդը դաստիարակելու գործին մէջ եւ հպարտօրէն յայտնեց, թէ սկաուտական կազմը «Միշտ պատրաստ» կը ներկայացնէ հայ երիտասարդութիւնը Ապրիլեան յուշարձանին առջեւ: Յատուկ յուշատախտակ մը յանձնուեցաւ Ռամօն Զօրապետեանին, եւ 30ամեակի աւանդական կարկանդակին շուրջ յի-

չատակելի խմբանկարը առնուեցաւ ներկայ հոգեւոր հայրերուն, ներկայացուցիչներուն եւ հիմնադիրներուն հետ: Պատուոյ հիւրերու շարքին էր նաեւ Հ.Յ.Դ. Արեւելեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հրայր Պարոնեան:


Խօսք տրուեցաւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեանին: Ան շնորհաւորեց Փրովիտընսի մասնաճիւղը, որուն անդամներուն անսակարկ նուիրումին շնորհիւ 30 տարիներ առաջ հիմնադիրներու կողմէ ցանուած հունտերը արդիւնաբեր դարձան:

Վերջին խօսքը տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանին: Ան չափազանց գնահատեց երիտասարդ սերունդին պատասխանատուութիւն ստանձնելու պատրաստակամութիւնը: Երեւոյթ մը, որ կը պայծառացնէ մեր ապագայի յոյսը, թէ Հ.Մ.Ը.Մ. ապահով ձեռքերու մէջ է:



30ամեակի կարկանդակի հատում: Աջէն ձախ՝ եղբ. Յակոբ Խաչատուրեան, Փրովիտընսի Ս. Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Ա. Քինյ. Պաղսարեան, Զ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պետիկ Տէր Վարդանեան, օրուան նախագահ տէր եւ տիկին Ռամօն Զօրապետեան եւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Դարբինեան:

Յայտագրի աւարտին, երգիչ Ժագ Յակոբեան եւ իր նուագախումբը խանդավառ մթնոլորտ մը ստեղծեցին: Երեւոն վերջ գտաւ յեղափոխական երգերու փունջով, ոգեւորելով բոլորը՝ նոյն կորովով շարունակելու Հ.Մ.Ը.Մ-ի յաղթական ու պանծալի երթը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Studio/TKEN 2005/PAIS



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՈՆԹԷՎԻՏԵՆՅԱՆ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի «Կամք» սկաուտական խումբի խմբապետուհին ՄՈՆԹԵՎԻՏԵՍ



Վերջերս, Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթեփիտեոյի «Վոամեան ակումբին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Կամք» սկաուտական խումբին դաստիարակչական առաջին հանդիպումը, որուն մասնակցեցան 17 երիտասարդներ, 10ը՝ խումբի ղեկավարներ, իսկ մնացեալ 7ը՝ փաղանգի անդամներ: Հանդիպումը կազմակերպեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներէն քոյրեր Սեսիլիա Տալլեանը եւ Պէթի Սէֆէրեանը: Անոնց օժանդակեցին Գորտոպայի «Արագած» սկաուտական խումբի խմբապետներ՝ եղբայրներ Ակուսթին Անայեանը եւ Ֆապրիսիո Աճէմեանը:

Երեք օրուան ընթացքին տեղի ունեցան հետաքրքրական դասընթացքներ եւ աշխատանիստեր: Ստեղծուեցաւ ընկերային ջերմ մթնոլորտ, առիթ տալով Գորտոպայի եղբայրներուն եւ յատկապէս «Կամք» սկաուտական խումբի անդամներուն միջեւ բարեկամական կապերու ամրացման:

Դասընթացքները եւ աշխատանիստերը կեդրոնացան հետեւեալ նիւթերուն վրայ-

- «Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնն ու կազմակերպութիւնը»- դասախօս՝ «Կամք» խումբի նախկին խմբապետ քոյր Նաթալի Տէրտէրեան:
- «Սկաուտիզմը Ուրուկուէյի մէջ եւ

Ձախէն աջ, ոտքի՝ Պէթի Սէֆէրեան, Ֆապրիսիո Աճէմեան, Ռաֆֆի Տէմիրճեան, Սիբայէլ Տէմիրճեան, Լեոնարտո Դանիէլեան, Տիէկո Գուլյունճեան, Ալեխո Մոզեան, Սարգիս Փանոսեան, Սիբայէլ Նալպանտեան, Արամ Տէր Մարգարեան, Ակուսթին Անալեան, Սեսիլիա Տալլեան:
Ծունկի՝ Սուշ Էուրեճեան, Ժանարիա Լափաճեան, Սթեֆանի Դանիէլեան, Էլիանա Փանոսեան, Ատրինէ Տէրտէրեան, Նիքոլ Պարպարեան, Ֆլորենսիա Ներկիզեան, Ալին Շէխէրլեան, Ալեքսիա Պարպարեան:

«Կամք» սկաուտական խումբի պատմութիւնը» - դասախօս՝ «Կամք» խումբի նախկին խմբապետ եղբ. Արամ Տէր Մովսէսեան:

- «Զարգացում»- դասախօս՝ քոյր Անտրէա Շմալոնեան (հոգեբան):
- «Հայաստանի Հանրապետութեան ներկայ կացութիւնը, ներառեալ Արցախի եւ Զաւախքի հարցերը»- դասախօս՝ քոյր Լուսինէ Վարժապետեան:

Այլ նիւթերու կարգին, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներն ու Գորտոպայի «Արագած» սկաուտական խումբի հրաւիրեալ եղբայրները ներկայացուցին «Ղեկավարի դիմագիծը», «Սկաուտական զարգացման ծրագիրը», «Գործունէութեան ծրագրաւորումը»

եւ «Սկաուտական արարողութիւնները» նիւթերով գեկուցումները:

Այս նախաձեռնութեան իրագործումը կարելի եղաւ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեփիտեոյի մասնաճիւղի վարչութեան անվերապահ աջակցութեան:

Վստահաբար, նման հանդիպումներու կարեւորութիւնը հիմնական է սկաուտական ղեկավար շրջանակներու համար: Նման հանդիպումներով կարելի է ա՛յլ աւելի բարձրանալ ու, նոյն ժամանակ, բարձրացնել խումբի միւս անդամները, համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին:

ԽՈՆԱՐՀ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ԵՂԲ. ԱԻՑ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՈՒՍՏԻՆ ԱՌԻԹՈՎ)

Սգակիր մը ՖԱՆԱՐ

Դեկտեմբեր 2009ին կը մահանար եղբայր ԱԼՕ Էքմէքճեանը, խոր սուգի մատնելով Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը եւ մասնաւորաբար Պաուշրիէի մասնաճիւղը:

Եղբայր ԱԼՕ տակաւին շատ բաներ ունէր տալիք Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին:

Ան ծնած է Պէյրուսթ, 1969ին: Նախնական կրթութիւնը ստացած է Ֆանարի Ազգ. Միհրան Գարակէօզեան վարժարանը: Փոքր տարիքէն ան մեծ սէր եւ յարգանք ցուցաբերած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, որուն անդամակցած է՝ միշտ լաւագոյնը ընծայելով անոր:

Եղբայր ԱԼՕն իր խոնարհ հոգին նուիրած է Հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանին, ուր յաճախած է շատ կանուխ եւ ապա՝ երկար տարիներ ետք ստանձնած է տեսուչի պաշտօն, մինչեւ իր մահը:

«Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին կառչած՝ եղբ. ԱԼՕ Հ.Մ.Ը.Մ-ի Պաուշրիէի մասնաճիւղին ծառայեց մինչեւ իր կեանքին վերջին վայրկեանները:

Այնքան տպաւորիչ էր եղբայր ԱԼՕյին բամբ ձայնը, երբ տունէն ելած վայրկեանէն կը կանչէր եղբայրներու եւ քոյրերու անուններ՝ մէկ առ մէկ գանոնք հրաւիրելու համար Փութպոլի եւ պասքեթպոլի փորձերու: Աւելի տպաւորիչը այն էր, թէ բոլորը անհամբեր կը սպասէին փորձի ժամերը: Եղբայր ԱԼՕյին շուրջ համախմբուելով բոլորը սիրով ու յարգանքով կը կատարէին անոր հրահանգներն ու ցուցմունքները:

Բոլորը կը սիրէին զինք, սիրոյ եւ յարգանքի պատճառն ալ իր անսահման նուիրումն էր Հ.Մ.Ը.Մ-ին:

«Շէյթան»ը, ինչպէս ծանօթ էր բոլորին, հիմնական սիւներէն մէկն էր Ֆանարի շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի մարզական խումբերուն: Չենք յիշեր որ օր մը ան գանգատած ըլլայ, որ շատ կ'աշխատի կամ՝ բեռը ծանր է: Ընդհակառակն, ան կը գանգատէր երբ իր շուրջիները քայլ չէին պահեր իր հետ՝ գանա-



զան ծրագիրներ իրագործելու ժամանակ: Իւրաքանչիւր շաբաթավերջ ծրագիր մը ունէր ան, մարզական խաղեր կազմակերպելով միշտ աշխատանքի մէջ կը պահէր բոլորը: Բան մը, որ միութեանական յաջողութեան բանալիներէն է, իսկ ինք շատ լաւ գիտէր այդ գաղտնիքը:


Իր անձին պէս կը ճանչնար շրջանի ընտանիքները: Կ'այցելէր բոլորին բնակարանները եւ ծնողներու հետ սերտ յարաբերութիւն մշակելով կը վայելէր անոնց յարգանքը: Իր ծրագիրները կը բացատրէր անոնց, որոնք իրենց կարգին կը խրախուսէին իրենց զաւակները անդամակցելու Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, հասակ նետելու համար մարզական ազնիւ ոգիով, միշտ կառչած մնալով անոր վեհանձն նշանաբանին:

Բոլորին շատ սիրելի եղբայր ԱԼՕ կանուխ բաժնուեցար մեզմէ, ետիդ ձգելով փայլուն ու օրինակելի յիշատակներ, որոնց պիտի հետեւին ներկայ քոյրերն ու եղբայրները, փորձելով ցուցաբերել նոյնքան նուիրում եւ ազնիւ հոգի, վառ պահելով Հ.Մ.Ը.Մ-ի ջահը Ֆանարի շրջանէն ներս, ուր տակաւին ներկայ է հոգիդ:

Յիշատակդ անթառամ՝ «Շէյթան»:

ԱՅԲՈՒԲԵՆ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ



Երբ կը խօսինք, կը գործածենք բազմաթիւ բառեր: Այդ բառերը կազմուած են տարբեր հնչիւններէ՝ ձայնաւոր եւ բաղաձայն: Մարդիկ հին ժամանակներուն անդրադարձած են, որ անհրաժեշտ է իրենց գործածած հնչիւնները նշաններու վերածել եւ գրի առնել: Հետեւաբար, ժամանակի ընթացքին այդ հնչիւնները վերածած են գիրերու եւ գետեղած են այբուբեններու մէջ:

Կարգ մը ժողովուրդներու գիրերը բոլորովին տարբեր են ուրիշներէ, ինչպէս օրինակ՝ չինացիներունը, որոնք կը գրեն հիերոկլիֆներով, որոնք կրնան նշանակել վանկ, բառ, երբեմն ալ ամբողջ նախագասութիւն մը: Ետ մը ժողովուրդներու այբուբեններ ալ նման են իրարու, տառերը ճիշդ նոյն տեսքը ունին, միայն երբեմն գիրեր կը պակսին կամ



կ'աւելնան: Եւրոպական այբուբեններու հիմքը լատիներէնն է: Լատիներէնը այլեւ մեռած լեզու է եւ չի գործածուիր, բայց շատ կարեւոր լեզու մըն է: Այսօր գործածուող շատ մը լեզուներ լատիներէնէն առած են բազմաթիւ բառեր ու արտայայտութիւններ, որոնք շատ կարեւոր են բժշկութեան եւ բնական միւս գիտութիւններուն համար:


Հայաստանը աշխարհի հնագոյն պետութիւններէն է, որ ունեցած է իր ազգային գիրը: Այդ կարեւոր գործը իր ուսերուն վրայ առած է Մեսրոպ Մաշտոց: Ան ուսումնասիրած է բազմաթիւ ժողովուրդներու լեզուները, այցելած է այն քաղաքները, որոնք իր ժամանակին գիտութեան կեդրոններ էին: Եւ ահա, 405 թուականին ստեղծած է հայոց գիրերը, որոնք այնքան կատարեալ են, որ ժամանակի ընթացքին շատ քիչ փոփոխութեան ենթարկուած են (օրինակ՝ միջին դարերուն մեր այբուբենին վրայ աւելցած են Օ եւ Փ գիրերը):

ԳԻՏԷԻՐ ԹԷ ...



Հայերէնի թարգմանուած առաջին նախագասութիւնը Աստուածաշունչի հետեւեալ խօսքն է. «Ճանաչել գիմաստութիւն եւ գիրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Հայերէն առաջին տպագիր գիրքը «Ուրբաթագիրք»ն է: Ան տպուած է Վենետիկի մէջ, 1512 թուականին, Յակոբ Մեղապարտի կողմէ: Ունի 124 թուղթէ էջ, տպագրուած է կարմիր եւ սեւ գոյներով:




ՋՈՒԹԱԿ

Ջուլթակը լարային աղեղնաւոր գործիք մըն է: Ան ունի չորս լար: Կը նուագենք աղեղը լարերուն վրայէն սահեցնելով: Կան տարբեր չափերով ջուլթակներ, որովհետեւ մարդիկ ջուլթակ կը սկսին նուագել երեք տարեկանէն:

Ջուլթակը ամէնէն տարածուած մենակատարային գործիքն է: Ջուլթակներու ընտանիքին կը պատկանին ալթը, թաւջուլթակը եւ քոնթրապասը:

Տրդ դարուն արաբներու կողմէ Եւրոպա բերուած աղեղնաւոր նուագարաններէն ստեղծուած է ջուլթակը: Ներկայի դասական ջուլթակին տեսակը մշակուած է 15-16րդ դարերուն: Ջուլթակներու ընտանիքը կը կազմէ

սիմֆոնիկ նուագախումբին կորիզը: Պէտք է յիշել քանի մը ջուլթակահարներու անուններ, որոնք աշխարհահռչակ են.- Ն. Փականինի, Տ. Օյսթրախ: Հայ ջուլթակահարներէն կ'արժէ յիշել Սերգէյ Խաչատրեանը, Հրաչեայ Աւաննէսեանը, որոնք շատ երիտասարդ են տակաւին, բայց արդէն աշխարհահռչակ նուագախումբերու հետ ելոյթ կ'ունենան:




ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԵՒ ԱՄԵՆԱՓՈՔՐ զԻՐՔԵՐԸ

● Աշխարհի ամենամեծ գիրքը ունի 1.75 մեթր բարձրութիւն եւ 1.9 մեթր լայնք: Գիրքը Քլենքէ ատլասն է: Չայն հոլանտացի առեւտրական մը նուիրած է Անգլիոյ թագաւոր Քարլ երկրորդին: Գիրքին մէջ կայ 39 քարտէս: Գիրքը բարձրացնելու համար անհրաժեշտ է 6 հոգի:

● Աշխարհի ամենափոքր գիրքը լոյս տեսած է Իտալիոյ մէջ, 1896 թուականին, 16 մմ. երկարութեամբ եւ 11 մմ. լայնքով, մօտաւորապէս բթամատի մը չափ:

● Հայերէն ամենամեծ մագաղաթեայ ձեռագիրը «Մշոյ ճառընտիր»ն է, ան գրուած է 1200-1202 թուականներուն, Երզնկայի մէջ: Կը կընէ 28 քիլոկրամ:

Իսկ ամենափոքր ձեռագիրը «Տօնացոյց»ն է, գրուած թէոդոսիոյ մէջ: Ան բաղկացած է 103 թերթերէ: Լուցկիի տուփէ մը աւելի փոքր է եւ կը կընէ 19 կրամ: Ձեռագիրը կը պահուի Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանին մէջ:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

3			5		4			7
8		4				3		6
		2		7		9		
	9		8		1		3	
2		3				6		1
	8		2		3		7	
		7		3		5		
4		8				7		3
9			7		2			4

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիներու իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

1	2	5	4	6	7	3	8	9
4	3	9	5	8	1	7	6	2
8	6	7	9	2	3	4	1	5
2	1	8	6	3	5	9	7	4
9	4	6	8	7	2	1	5	3
5	7	3	1	9	4	6	2	8
7	9	1	3	5	8	2	4	6
6	5	2	7	4	9	8	3	1
3	8	4	2	1	6	5	9	7

Պատասխանը՝ յաջորդիւ


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Էն. Պի. էյ.»ի կազմերէն:
2. Միջերկրականեան կղզի - Յոսորտ:
3. Առարկայ - Կեղծ ճարտարաբան:
4. Բազմութիւն - Թախանձանք:
5. Հասարակութիւն - Կուլթ:
6. Կիլիկեան քաղաք - Ափրիկեան երկիր:
7. Հաստատական պատասխան - Ինք - Մեթնի աւաններէն:
8. Վահան թէքէեանի գրչանուններէն - Մարոկե- նի - Այբուբենէն:
9. Ժամանակամիջոց - Յաճախ:
10. Օժանդակ - Լծկան կենդանի:
11. Գործի մը վրայ երկարօրէն տնտնալ:
12. Այբուբենէն - Ֆրանսայի նախագահական նըս- տավայրը:
13. «Ֆորմիլա 1»ի աւստրալիացի մրցավարորդ - Գոսթա Կաւրասի ֆիրմերէն:
14. Հայ դիցուհի - Իրերայաջորդ գիրեր - Այբուբե- նէն:
15. Ինքնավար - Ամերիկեան հալածիչներու տիպ:
16. Անկողինի կտաւ - Աղամանդի ճեղք:
17. Բնութեան ուժեր - Բոլոր ժամանակներու լա- ւագոյն ֆուլթպոլիստը:
18. Տարի - Ածականակերտ մասնիկ - Եղէգէ փոքր սրինգ - Հնարիչ:
19. Ամէկոտ - Իգական օտար անուն:
20. Արական օտար անուն - Ժայթքում - 1900ի ողիմպիականները հիւրընկալած քաղաքը:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Ռամկօրէն՝ այո՛ - Յուցական ածական - Յղկէ՛:
2. Կարող - Տղայամիտ, դիւրահաւան:
3. Կեղրոնական Ամերիկայի բնիկ ժողովուրդնե- րէն - Պատշաճ - Արական օտար անուն:
4. Հայաստանի ճատրակի աղջկանց 2011ի ախոյեանուհին:
5. Քեսրոլանի օգափոխութեան վայրերէն - Բայոց - Ոտք - Դագուր:
6. Էական բայէն - Տառի մը դրացիները - Պախրէ - Ածականակերտ մասնիկ - Տա- ուի մը դրացիները - Ռուսերէն՝ այո՛:
7. Եւրոպական ինքնաշարժներու մակնիշ մը - Փորագրուած ստեղծագործու- թիւն - Եղեսիոյ արդի անուանումը:
8. Ֆրանսական քաղաք - Ոգելից ըմպելի (հակ.) - Չփտող:
9. Իրաքեան լրատու գործակալութիւն - Լոյծ սեւ ձիւթ - Համադասական շաղ- կապ:
10. Օծանելիք - Կրկնուած բաղաձայններ - Հայաստանի քաղաքներէն:
11. Անասունի դիակ - Չուիցերիացի թենիսմէն (մականունը եւ անունը) - Բուռ:
12. Ճչա՛ - Նաեւ - Ամերիկեան պետութիւն - Ողորմի՛ր:
13. Լ. Ղ. Հանրապետութեան վարչական շրջանային կեղրոններէն - Ամերիկեան երկիր - Հեռու:
14. Հին ձեռով՝ իգական «նա» - Սիգանք - Իրերայաջորդ գիրեր - Մոհամէտի փե- սան:
15. Անառականներու բանտ - Լրտես - Գեղմ:



ԹԻՒ 194 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԲՈՒՐԸ

1	Կ	Ե	Ս	Ա	Ր	Ի	Ա		Ա								
2	Ի	Ր	Ա	Պ	Է	Ս		Ա	Յ								
3	Ր	Ե	Ս	Ա		Կ	Ո	Մ	Ս								
4	Ո	Ի		Ս	Տ		Տ	Ր									
5	Ն	Ո	Վ	Ա	Ք	Տ	Ի	Ո	Ք	Ո	Վ	Ի	Չ				
6	Ռ	Ա	Տ	Ա	Ն		Ա	Ր	Մ		Յ	Ա	Մ	Ա	Ք		
7	Ո	Ր	Ա	Կ		Տ	Ն	Ա	Ն	Կ		Շ	Ա	Ր	Ա		
8	Մ	Ե	Ն	Ա	Կ	Ե	Ա	Յ		Տ	Ա	Տ		Ի	Մ		
9	Ա	Կ	Ա	Ն		Տ	Ր	Ո	Հ	Ա	Կ		Ո	Ք			
10	Ն		Ի		Ի	Ր	Ա	Ի	Ա	Կ	Ա	Ր	Գ	Բ			
11	Պ	Տ	Ո	Ի	Տ	Ա	Ն		Ն	Ռ		Ի	Ն	Ա			
12	Ե	Ր	Ր		Ա	Կ		Ա	Ն	Ա	Ն	Տ		Ա	Ս		
13	Ր	Է		Ա	Լ				Ա	Լ		Ի	Մ	Տ			
14	Ե	Չ	Ա	Կ	Ի				Ա	Մ	Ա	Ս	Ի	Ա			
15	Չ		Մ	Ն	Ա				Ե	Ր	Ա	Ն	Ի	Ն			
16	Ո	Ղ	Բ	Ա					Ս	Ի	Ն	Ա		Ա	Ք		
17	Վ		Ա	Մ	Ա	Կ	Ա	Ն		Ք	Ի		Օ	Ն			
18	Ս	Տ	Ր	Ա	Տ	Ե	Լ	Ա	Տ		Շ	Ա	Հ	Է	Ն		
19	Ք	Է		Ն	Ա	Ն	Ի	Ր		Տ	Ա	Ր	Ա	Մ	Է		
20	Ի	Ր	Օ	Ք		Տ	Ա	Տ	Ր	Ա	Կ		Ն	Ք			



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁՔԸ